Թողարկման 20-րդ տարի

ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր

2013

Օգոստոս

թիվ 8 (180)

Բովանդակություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ
ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ
ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

4 ՀՀ ԿԲ խորհրդի որոշումները վերաֆինանսավորման տոկոսադրույքի, որոշ ՓԲԸ-ների «Ռիա Մանի Թրանսֆեր» և «Մանիգրամ» արտասահմանյան վճարահաշվարկային համակարգերում մասնակցության թույլտվություն, ինչպես նաև որոշ ՍՊԸ-ների գրավատան կազմակերպման լիցենզիաներ տրամադրելու վերաբերյալ

4 ՀՀ ԿԲ խորհրդի և նախագահի որոշումները «Իջ էյջ Զի Գրուպ» ՍՊԸ-ին արտարժույթի առուվաճառքի լիցենզիա տրամադրելու, ինչպես նաև 3 ՍՊԸ-ների, 2 արտարժույթի փոխանակման կետերի, 1 գրավատան նկատմամբ տուգանք կիրառելու, 2 արտարժույթի փոխանակման կետերի, 1 գրավատան նախազգուշացում հայտարարելու վերաբերյալ

5 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 173-Ն որոշումը «Տեղեկատվական անվտանգության ապահովման նվազագույն պահանջների սահմանման վերաբերյալ» կարգը հաստատելու մասին»

22 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 176-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի հոկտեմբերի 2-ի թիվ 311-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին»

24 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 177-Ն որոշումը «Հաշվետու թողարկողի կանոնադրական կապիտալում մասնակցության ձեռքբերման, ավելացման և նվազման վերաբերյալ տեղեկացման և բացահայտման կարգը» կանոնակարգ 4/15-ը հաստատելու մասին»

28 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 178-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի վճարահաշվարկային համակարգի կամ տեղեկատվական համակարգերի մասնակիցների կոդավորման կառուցվածքը, ինչպես նաև հաճախորդների հաշվեհամարների կառուցվածքը սահմանելու մասին կարգը» հաստատելու և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2002 թվականի դեկտեմբերի 5-ի թիվ 394-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին»

47 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 179-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի փետրվարի 9-ի թիվ 39-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին»

51 ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ
ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ԵՎ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՎ

- 2013 թվականի օգոստոսի 13-ի նիստում ***ԿԲ խորհուրդը բարձրացրեց վերաֆինանսավորման տոկոսադրույքը*** 0.5 տոկոսային կետով՝ սահմանելով 8.5% (որոշում թիվ 193Ա):
- ***«Ռիա Մանի Թրանսֆեր» և «Մանիգրամ» արտասահմանյան վճարահաշվարկային համակարգերում մասնակցության թույլտվություն է տրամադրվել*** «Առէկսիմբանկ-Գազպրոմբանկի խումբ» փակ բաժնետիրական ընկերությանը և «Մոբի դրամ» դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող փակ բաժնետիրական ընկերությանը (որոշումներ թիվ 187Ա, 207Ա):
- ***Գրավատնային գործունեության իրականացման լիցենզիա է տրամադրվել*** «ԱՄՍ» և «Ավակրեդ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություններին (որոշումներ թիվ 188Ա, 199Ա):
- ***Արտարժույթի առուվաճառքի լիցենզիա է տրամադրվել*** «Իջ էյջ Ջի Գրուպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (որոշում թիվ 202Ա):
- Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները խախտելու համար 3 սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների, 2 արտարժույթի փոխանակման կետերի, 1 գրավատան նկատմամբ ***կիրառվել է տուգանք***՝ 6160000 դրամ գումարի չափով (որոշումներ թիվ 1/660Ա, 1/717Ա, 1/742Ա, 1/674Ա, 1/732Ա, 1/734Ա) և 2 արտարժույթի փոխանակման կետերի, 1 գրավատան ***հայտարարվել է նախազգուշացում***՝ հետագայում նման խախտումները բացառելու հանձնարարականով (որոշումներ թիվ 1/675Ա, 1/702Ա, 1/741Ա):

«Տեղեկատվական անվտանգության ապահովման նվազագույն պահանջների սահմանման վերաբերյալ» կարգը հաստատելու մասին[*]

Հաշվի առնելով տեղեկատվական անվտանգության կարևորությունը և տվյալ ոլորտին բնորոշ ռիսկերը,

նպատակ ունենալով կազմակերպությունների տեղեկատվական անվտանգության կառավարման համակարգը համապատասխանեցնել տեղեկատվական անվտանգության ապահովման ոլորտում կիրառվող միջազգային ստանդարտների պահանջներին՝ ներդնելով միջազգային լավագույն փորձը,

հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե», «իբ» և «իդ» կետերը, «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 111-րդ հոդվածի 2-րդ մասը, 181-րդ հոդվածի 1-ին մասը, «Վարկային տեղեկատվության շրջանառության և վարկային բյուրոների գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետը, «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 10-րդ մասի 4-րդ կետը,

հաշվի առնելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Տեղեկատվական անվտանգության ապահովման նվազագույն պահանջների սահմանման վերաբերյալ» կարգը՝ համաձայն Հավելվածի (կցվում է):

2. Սահմանել, որ ՀՀ տարածքում գործող բանկերը, Կարգավորվող շուկայի օպերատորը, Կենտրոնական դեպոզիտարիան և վարկային բյուրոները իրենց տեղեկատվական անվտանգության կառավարման համակարգը պետք է համապատասխանեցնեն տեղեկատվական անվտանգության ապահովման ոլորտում կիրառվող միջազգային ստանդարտների պահանջներին և ստանան համապատասխան ստանդարտների պահանջները բավարարելու վերաբերյալ վկայագիր: Ընդ որում, սույն որոշումը ուժի մեջ մտնելու դրությամբ գործող՝ սույն կետում նշված կազմակերպությունները 2015 թվականի հունվարի մեկի դրությամբ պետք է ստացած լինեն համապատասխան ստանդարտների պահանջները բավարարելու վերաբերյալ վկայագիր:

3. Սահմանել, որ ապահովագրական ընկերությունները և վճարահաշվարկային կազմակերպությունները իրենց տեղեկատվական անվտանգության կառավարման համակարգը պետք է համապատասխանեցնեն տեղեկատվական անվտանգության ապահովման ոլորտում կիրառվող միջազգային ստանդարտների պահանջներին և ստանան համապատասխան ստանդարտների պահանջները բավարարելու վերաբերյալ վկայագիր: Ընդ որում, սույն որոշումն ուժի մեջ մտնելու դրությամբ գործող՝ սույն կետում նշված կազմակերպությունները 2016 թվականի հունվարի մեկի դրությամբ պետք է ստացած լինեն համապատասխան ստանդարտների պահանջները բավարարելու վերաբերյալ վկայագիր:

4. Սահմանել, որ սույն որոշման 2-րդ և 3-րդ կետերում նշված միջազգային ստանդարտով նվազագույնը պետք է սահմանվեն պահանջներ հետևյալ դրույթների վերաբերյալ.

1) Տեղեկատվական անվտանգության կառավարման համակարգի (այսուհետ՝ ՏԱԿՀ) ստեղծումը, ներդրումը, կառավարումը և գործառնությունը, ըստ որի պետք է.
   ա. որոշել ՏԱԿՀ-ի ոլորտը և գործողության սահմանագիծը,
   բ. սահմանել ՏԱԿՀ-ի քաղաքականությունը,
   գ. որոշել ՏԱԿՀ-ի ռիսկերի գնահատման մոտեցումը,
   դ. որոշել ՏԱԿՀ-ի ռիսկերը,
   ե. վերլուծել և գնահատել ՏԱԿՀ-ի ռիսկերը,
   զ. որոշել և գնահատել ՏԱԿՀ-ի ռիսկի դիմագրավման տարբերակները,
   է. որոշել ՏԱԿՀ-ի ռիսկերի դիմագրավման նպատակը և կառավարման միջոցները,
   ը. ստանալ ՏԱԿՀ-ի մնացորդային ռիսկերի հաստատումը,

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2013 թ. հուլիսի 9-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 5.08.2013 թ. (ՀՀԳՏ N25 (469)[1], 15.08.2013):

թ. ՏԱԿՀ-ի ներդրման և գործառնության թույլտվության ստացում,
ժ. պատրաստել ՏԱԿՀ-ի կիրառելիության հայտարարությունը:
2) ՏԱԿՀ-ի ընթացաստուգումը և վերլուծությունը,
3) ՏԱԿՀ-ի պահպանումը և բարելավումը,
4) Փաստաթղթերին ներկայացվող պահանջները, փաստաթղթերի և գրառումների հսկողությունը,
5) Ղեկավարության պատասխանատվությունը և պարտավորությունը,
6) Ռեսուրսների կառավարումը և ռեսուրսներով ապահովումը,
7) Ուսուցումը, տեղյակությունը և իրազեկությունը,
8) ՏԱԿՀ-ի ներքին աուդիտները,
9) Ղեկավարության կողմից ՏԱԿՀ-ի վերլուծությունը,
10) ՏԱԿՀ-ի պարբերական բարելավումը,
11) Ուղղիչ և կանխարգելիչ գործողությունները,
12) Անվտանգության քաղաքականությունը,
13) Տեղեկատվական անվտանգության կազմակերպումը,
14) Ակտիվների կառավարումը,
15) Մարդկային ռեսուրսների հետ կապված անվտանգությունը,
16) Ֆիզիկական պաշտպանությունը,
17) Հաղորդակցության միջոցների կառավարումը,
18) Տեղեկատվությունից օգտվելու հնարավորության հսկողությունը,
19) Տեղեկատվական համակարգերի մշակումը, ներդրումը և պահպանումը,
20) Տեղեկատվական անվտանգության միջադեպերի հսկողությունը,
21) Բիզնեսի շարունակականության կառավարումը,
22) Համապատասխանությունն օրենսդրության պահանջներին:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2014 թվականի հունվարի մեկին:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
16 հուլիսի 2013 թ., N 173-Ն

Հավելված

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2013 թվականի հուլիսի 9-ի թիվ 173-Ն որոշմամբ

ԿԱՐԳ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Գլուխ 1. Ընդհանուր դրույթներ

1. Սույն կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (այսուհետ՝ Կենտրոնական բանկ) կողմից լիցենզավորվող և/կամ գրանցվող կազմակերպություններում (այսուհետ՝ Կազմակերպություն(ներ))՝ Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում առկա ռիսկերի կառավարմանն ու նվազեցմանը ուղղված նվազագույն պահանջները: Այս պահանջները մշակվել են՝ հիմք ընդունելով Ստանդարտացման միջազգային կազմակերպություն (ԻՍՕ/ISO)/Միջազգային էլեկտրատեխնիկական հանձնաժողովի (ԻԷԿ, IEC) կողմից մշակված՝ ԻՍՕ/ԻԷԿ 27001:2005 «*Տեղեկատվական տեխնոլոգիաներ. Անվտանգության ապահովման մեխանիզմներ. Տեղեկատվական անվտանգության կառավարման համակարգեր. Պահանջներ» (ISO/IEC 27001:2005 Information technology - Security techniques – Information security* management systems - Requirements) ստանդարտը:

2. Սույն կարգը հիմք է հանդիսանում Կազմակերպություններում տեղեկատվական անվտանգության ապահովման ոլորտում կիրառվող միջազգային ստանդարտների ներդրման և համապատասխան հավաստագրման պահանջների սահմանման համար: Ընդ որում, նշված ստանդարտների պահանջներին համապատասխանության վկայագրում անցնելը՝ Կազմակերպությանը չի ազատում սույն կարգով սահմանված պահանջների կատարումից:

3. Սույն կարգում ներկայացված են Կազմակերպությունների տեղեկատվական անվտանգության ապահովման մոտեցումները, որոնք հանդիսանում են պաշտպանության նպատակների և խնդիրների համակարգված շարադրանք, այդ թվում՝ տեղեկատվական անվտանգության ընդունելի մակարդակի ապահովման միջոցների, ընթացակարգերի և հիմնական սկզբունքների նկարագրություն, այսինքն՝ ներկայացվում են Կազմակերպության տեղեկատվական անվտանգության ապահովման հիմնական սկզբունքները:

Գլուխ 2. Հիմնական հասկացություններ

4. Սույն կարգի իմաստով՝

1) ***Տեղեկատվական անվտանգություն (ՏԱ)***՝ Կազմակերպությանը պատկանող տեղեկատվությունը չթույլատրված մուտքից, օգտագործումից, հրապարակումից, խեղաթյուրումից, փոփոխումից կամ ոչնչացումից պահպանում/պաշտպանություն:
2) ***Տեղեկատվական անվտանգության ապահովման քաղաքականությունը (ՏԱ քաղաքականություն)*** իրենից ներկայացնում է Կազմակերպության հստակ տեսլականը տեղեկատվական անվտանգության ապահովման ճանապարհների և մեթոդների վերաբերյալ, որով սահմանվում են ընդհանուր դրույթներ՝ Կազմակերպության տեղեկատվական ռեսուրսների և տեխնիկածրագրային համակարգերի կառավարման, տեղեկատվության մշակման, փոխանցման և տրամադրման վերաբերյալ:
3) ***Տեղեկատվություն***՝ տեղեկատվություն, որը Կազմակերպության կողմից պահպանվում, մշակվում, փոխանցվում և/կամ ներկայացվում է ցանկացած միջոցով՝ էլեկտրոնային և թղթային կրիչներով, բանավոր (այդ թվում նաև՝ հեռախոսային խոսակցություններ) և/կամ վիզուալ տեսքով տեղեկատվության ներկայացմամբ (օրինակ՝ համակարգչի էկրանին պատկերվող տեղեկատվություն, տելեկոնֆերանսներ և այլն):
4) ***Կազմակերպություն***՝ սույն կարգի իմաստով Կազմակերպություններ են համարվում.
   ա. ՀՀ տարածքում գործող բանկերը,
   բ. Ապահովագրական ընկերությունները,
   գ. Վճարահաշվարկային կազմակերպությունները,
   դ. Կենտրոնական դեպոզիտարիան,
   ե. Կարգավորող շուկայի օպերատորը,
   զ. Վարկային բյուրոները:
5) ***«Գործառնական օր» ծրագրային համակարգ***՝ Կազմակերպության հիմնական գործունեության իրականացման համար կիրառվող ավտոմատացված համակարգ, որը նախատեսված է միասնական հաշվառման, հաշվապահական հաշվառման, որոշակի բնույթի գործառնությունների իրականացման համար և/կամ, որը հնարավորություն է տալիս կատարելու վճարումներ՝ նախապես վերահսկելով օգտագործողների իրավունքները, հաշիվների մնացորդները, մնացորդների սահմանաչափերը (լիմիտները):
6) ***Ղեկավարության վերին օղակ***՝ Կազմակերպության կառավարման բարձրագույն մարմին, գործադիր տնօրեն, խորհուրդ կամ այլ:
7) ***Ղեկավար աշխատակազմ***՝ Կազմակերպության դեպարտամենտի, վարչության և/կամ բաժնի պետեր:
8) ***Ներքին տեղեկատվական ցանց***՝ Կազմակերպության լարային և/կամ անլար, ներառյալ՝ նաև մասնաճյուղերի և ներկայացուցչությունների համակարգչային ֆիզիկական և/կամ անլար ցանցերը:
9) ***Պահուստային կրկնօրինակ***՝ համակարգի աշխատանքն արձանագրող մատյանի և համակարգում մշակվող տեղեկությունների կրկնօրինակում, որի նպատակն է՝ համակարգի խափանման, տեղեկատվության կորստի կամ այլ նմանատիպ դեպքերում գրանցված տեղեկատվությունն իրավասու օգտագործողներին որոշակի ժամանակահատվածում հասանելի դարձնելը:
10) ***Արխիվ***՝ տեղեկատվության պարբերական հավաքագրումը և Կազմակերպության տարածքում և/կամ տարածքից դուրս տեղեկատվական կրիչների կամ համակարգիչների և/կամ այլ տարբերակով երկարաժամկետ պահպանվող տեղեկատվություն:
11) ***«տաք» ռեզերվ կամ «տաք» սերվեր***՝ պահուստ կամ սերվեր, որը նախատեսված է հիմնական սերվերի խափանման դեպքում անմիջապես անցում կատարելու պահուստային սերվերին:

12) ***«սառը» ռեզերվ կամ «սառը» սերվեր***՝պահուստ կամ սերվեր, որի վերականգնումը կատարվում է որոշակի ժամանակահատվածում:
13) ***Արտաքին մուտք***՝ Կազմակերպության ներքին տեղեկատվական ցանցից դուրս գտնվող աշխատակայանից միացում Կազմակերպության ներքին տեղեկատվական ցանցին:
14) ***Արտաքին օգտագործող***՝օգտագործող, որը միանում է Կազմակերպության ներքին տեղեկատվական ցանցին այդ ցանցից դուրս գտնվող աշխատակայանից (արտաքին մուտքից օգտվող աշխատակից կամ օգտագործող):
15) ***Համակարգերի ադմինիստրատոր***՝աշխատակից, որը պատասխանատու է համակարգերի տեղադրման, կառավարման և սպասարկման, համակարգի թարմացման և համակարգի արխիվացման և վերականգնման համար:
16) ***Ցանցային ադմինիստրատոր***՝աշխատակից, ով իրականացնում է ցանցային ենթակառուցվածքի բաղադրիչների (երթուղիչներ, ուղղորդիչներ, միջցանցային էկրաններ, ցանցի սեգմենտներ և այլն) կարգաբերումը/կառավարումը և սպասարկումը: Ցանցային ադմինիստրատորը պատասխանատու է նաև ցանցի պահուստավորման, համապատասխան ծրագրային միջոցների և սարքավորման ձեռքբերման վերահսկման, ինչպես նաև տեղադրման արտոնագրման համար: Ցանցային ադմինիստրատորները պատասխանատու են նաև ինտերնետային կապ տրամադրող ընկերությունների կողմից տրամադրվող ծառայությունների մոնիթորինգի և արտաքին (թույլատրված, արտոնագրված) տեղեկատվական ռեսուրսների հասանելիության ապահովման համար:
17) ***Երրորդ անձանց***՝ Կազմակերպությանը ժամանակավոր և/կամ անժամկետ պայմանագրային հիմունքներով ծառայություններ մատուցող ընկերություն կամ անձ, որը որևէ կերպ առնչվում է, կարող է առնչվել կամ հասանելիության իրավասություններ ձեռք բերել Կազմակերպության կողմից որևէ սկզբունքով դասակարգված տեղեկատվության հետ:
18) ***Դասակարգված տեղեկատվություն***՝ Կազմակերպության կողմից որպես կոնֆիդենցիալ, գաղտնի, հույժ գաղտնի կամ այլ կերպ դասակարգված տեղեկատվություն, որոնց թվի մեջ առնվազն պետք է մտնի առևտրային, բանկային գաղտնիք կազմող տեղեկատվությունը, Կազմակերպության զարգացման ծրագրերը, հնարավոր կլանման թիրախները, որոշ հեռախոսային համարներ, անձնակազմի և հաճախորդների վերաբերյալ տեղեկատվությունը: Այսպիսի տեղեկատվության թվին են պատկանում նաև երրորդ կազմակերպությունների/ընկերությունների վերաբերյալ տեղեկատվությունը, որոնք տրամադրվել են չբացահայտման պայմանով:
19) ***Բաց (հանրամատչելի) տեղեկատվություն***՝ տեղեկատվությունը, որը համապատասխան իրավասություններ ունեցող մարմնի կողմից հանրության համար հասանելի է բնութագրվել, որը ներկայացված է փաստաթղթային և/կամ տեղեկատվության զանգվածների տեսքով, անկախ տեղեկատվության պահպանման, ներկայացման և արտապատկերման եղանակից (օրինակ՝ տվյալ Կազմակերպության ինտերնետային էջի հանրամատչելի մասում ներկայացված տեղեկատվությունը, մամուլում տպագրվող տվյալներ և այլն):
20) ***Ծածկագրում***՝բաց տեղեկատվության ձևափոխումը որոշակի ծածկագրման ալգորիթմով:
21) ***Տեղեկատվական հենքի ադմինիստրատոր***՝ Կազմակերպության տվյալների հենքերի տեղեկատվության պահպանման, կառուցվածքի սահմանման և սպասարկման համար պատասխանատու աշխատակից: Տեղեկատվական հենքի ադմինիստրատորի պարտականությունների մեջ են մտնում տեղեկատվական հենքերի կառավարման համակարգերի տեղադրումն ու կարգաբերումը, ինչպես նաև տեղեկատվական հենքերում պահվող տեղեկատվության հասանելիության և ամբողջականության ապահովումը:
22) ***Անվտանգության պատասխանատու***՝ իրականացնում է Կազմակերպության տեղեկատվական անվտանգության քաղաքականության փոփոխությունների նախաձեռնումը, տեղեկատվական ենթակառուցվածքի բոլոր բաղադրիչների, ռեսուրսների և գործընթացների, Կազմակերպության անվտանգության կանոնների համապատասխանության հսկումը, տեղեկատվական ռիսկերի կառավարումը, տեղեկատվական անվտանգության խախտման պատահարների վարումը և քննության իրականացումը, տեղեկատվական ռեսուրսների հանդեպ հասանելիությունների կառավարման գործընթացում մասնակցությունը և վերահսկումը, ինչպես նաև օգտագործողների ուսուցումը և իրազեկության մակարդակի բարձրացումը:
23) ***«Արգելված է ամեն ինչ, բացի...» սկզբունք***՝ իրավասությունների տրամադրման սկզբունք, որտեղ համապատասխան համակարգում բոլոր օգտագործողներին սկզբում արգելվում է իրականացնել ցանկացած գործողություն, այսինքն՝ փակվում են բոլոր իրավասությունները, այնուհետև բացվում են միայն տվյալ աշխատատեղով սահմանված աշխատանքային պարտականությունների իրականացման համար անհրաժեշտ և/կամ Կազմակերպության ղեկավարության վերին օղակի կողմից հաստատված իրավասությունները:

24) ***Տեխնիկական առաջադրանք***՝ Կազմակերպության ծրագրային համակարգի տեխնիկածրագրային պահանջները սահմանող փաստաթուղթ:
25) ***Մշակող ընկերություն***՝ Կազմակերպության «Գործառնական օր» ծրագրային համակարգը և/կամ այլ տիպի ծրագրային համակարգեր մշակող, Կազմակերպության ստորաբաժանումներից տարբերվող ընկերություն:
26) ***Գլխավոր օգտագործող/ադմինիստրատոր***՝ Կազմակերպության ծրագրային ապահովման հիմնական ադմինիստրատոր, որն ի սկզբանե առկա է համակարգում կամ տվյալների հենքում, և ստացել է համապատասխան իրավասություններ համակարգը մշակող որևէ ընկերության կամ Կազմակերպության կողմից՝ ծրագրային համակարգի նախնական, սկզբնական, հիմնական, բազային կարգաբերումների իրականացման համար (օրինակ՝ sysadmin, BANK, root, sa և այլն):
27) ***Պատվիրակում (outsourcing)***՝ Կազմակերպության ներքին գործարար գործառույթների որոշ մասի իրականացման հանձնումը, պայմանագրային հիմունքներով, երրորդ անձին/ընկերությանը:

Գլուխ 3. ՏԱ կազմակերպումը

5. Կազմակերպության տեղեկատվական անվտանգության համակարգի կառուցումը պետք է հիմնված լինի համալիր մոտեցման վրա: Այս մոտեցումն ուղղված է Կազմակերպության ներսում տեղեկատվության մշակման, հավաքագրման, պահպանման և տրամադրման համար անվտանգ միջավայրի ստեղծմանը՝ միավորելով սպառնալիքների դեմ ուղղված միջոցառումները:

6. Կազմակերպության տեղեկատվական անվտանգության ապահովման համակարգը պետք է կառուցված լինի հետևյալ սկզբունքների հիման վրա.

1) ***օրինականություն.*** ՏԱ ապահովման միջոցները և միջոցառումները պետք է ընտրվեն գործող օրենսդրությանը համապատասխան,
2) ***համակարգային.*** ՏԱ ապահովման համակարգի կառուցման համալիր մոտեցումը ենթադրում է տեղեկատվության անվտանգության ապահովման խնդիրների ընկալման և լուծման համար էական նշանակություն ունեցող բոլոր փոխկապակցված, փոխազդող և ժամանակի մեջ փոփոխվող տարրերի և պայմանների հաշվի առնում,
3) ***ամբողջականություն.*** տեխնիկածրագրային համակարգերի պաշտպանության միջոցների և մեթոդների ամբողջական օգտագործումը ենթադրում է տարաբնույթ միջոցների համաձայնեցված կիրառություն պաշտպանության ամբողջական համակարգի կառուցման ժամանակ, որը կծածկի սպառնալիքների իրագործման առկա բոլոր ուղիները (ուղղությունները),
4) ***պաշտպանության անընդհատություն.*** անընդհատ, նպատակաուղղված գործընթաց, որը ենթադրում է համապատասխան որոշումների կայացումը Կազմակերպության գործունեության ողջ ժամանակահատվածում,
5) ***արդիականություն և կատարելագործում.*** կանխարգելիչ բնույթի միջոցառումների ներդրում և ՏԱ ապահովման միջոցառումների և միջոցների անընդհատ կատարելագործում,
6) ***արդյունավետություն.*** ենթադրում է ՏԱ ապահովման նպատակով ծախսված գումարների, տեղեկատվական ռեսուրսների և հնարավոր վնասների չափի հարաբերակցության վերլուծություն,
7) ***անձնական պատասխանատվություն.*** ենթադրում է տեղեկատվության և այն մշակող համակարգերի անվտանգությունն ապահովող բոլոր աշխատակիցների պատասխանատվության սահմանումը՝ նրանց իրավասությունների սահմաններում,
8) ***իրավասությունների նվազեցման սկզբունք.*** նշանակում է իրավասությունների տրամադրում միայն աշխատանքային անհրաժեշտությունից ելնելով,
9) ***փոխհամագործակցություն.*** Կազմակերպության ներսում աշխատանքային բարենպաստ և բարիդրացիական մթնոլորտի ձևավորում,
10) ***ՏԱ ապահովման համակարգի ճկունություն.*** ՏԱ ապահովման մակարդակի փոփոխության հնարավորություն,
11) ***ՏԱ ապահովման համակարգերի կիրառման դյուրինություն.*** ՏԱ ապահովման համակարգը պետք է լինի ինտուիտիվ հասկանալի,
12) ***գիտականորեն հիմնավորված և տեխնիկապես իրագործելի.*** տեղեկատվական տեխնոլոգիաները, տեխնիկածրագրային համակարգերը, տեղեկատվության պաշտպանության միջոցառումները և միջոցները պետք է իրագործված լինեն հաշվի առնելով գիտատեխնիկական առաջընթացները և ժամանակակից տեխնոլոգիաները,

13) ***մասնագիտացում և պրոֆեսիոնալիզմ.*** ՏԱ ապահովման միջոցների մշակման և համապատասխան միջոցառումների իրագործման նպատակով պետք է ներգրավվեն մասնագիտացված կազմակերպություններ և/կամ անձինք, որոնք տվյալ ասպարեզում ունեն գործնական փորձ և համապատասխան լիցենզիա (մասնագիտացված անձանց դեպքում՝ աշխատանքային փորձ) համապատասխան ծառայությունների մատուցման համար: Ադմինիստրատիվ միջոցների իրագործման և ՏԱ ապահովման միջոցների շահագործումը պետք է իրականացվի մասնագիտացված և համապատասխան կրթություն ստացած և/կամ աշխատանքային փորձ ունեցող մասնագետների կողմից,

14) ***պարտադիր վերահսկողություն.*** վերահսկողությունը պետք է կրի պարտադիր և արդիական/պարբերական բնույթ՝ պաշտպանության սահմանված կանոնների խախտման փորձերի հայտնաբերման և կանխարգելման արդյունավետ իրագործման նպատակով:

7. ՏԱ ապահովման նպատակով կազմվող փաստաթղթերը պետք է մշակվեն՝ հաշվի առնելով հետևյալ հիմնադրույթները.

1) ***Գաղտնիություն՝*** տեղեկատվության հասանելիության ապահովում միայն համապատասխան իրավասություն ունեցող օգտագործողներին,
2) ***Ամբողջականություն՝*** տեղեկատվության հուսալիության, ամբողջականության և մշակման մեթոդների ապահովություն,
3) ***Հասանելիություն՝*** նույնականացված օգտագործողների համար անհրաժեշտ տեղեկատվության և դրա հետ կապված ակտիվների հասանելիության ապահովում,
4) ***Պատասխանատվության բաժանում/դերերի բաժանում,***
5) ***Հսկողություն:***

8. Տեղեկատվական տեխնոլոգիաների ռիսկի պատշաճ կառավարման և նվազեցման համար Կազմակերպությունները պետք է մշակեն առնվազն հետևյալ փաստաթղթերը.

1) ***Տեղեկատվական անվտանգության քաղաքականություն/ռազմավարություն,***
2) ***Արտակարգ իրավիճակներում գործողությունների ծրագրեր,***
3) ***Տեղեկատվական համակարգերում առկա ռիսկերի կառավարման կանոնակարգեր, կարգեր և/կամ կանոններ,***
4) ***Գործարար ծրագրեր, ընթացակարգեր, ուղեցույցներ, պայմանագրեր:***

Գլուխ 4. Տեղեկատվական անվտանգության քաղաքականություն/ռազմավարություն

9. Կազմակերպությունը պետք է ունենա ՏԱ քաղաքականության փաստաթուղթ, որը պետք է հաստատված լինի Կազմակերպության ղեկավարության վերին օղակի կողմից:

10. ՏԱ քաղաքականությունը պետք է վերանայվի/թարմացվի առնվազն ամեն երեք տարին մեկ անգամ, ինչպես նաև՝ ՏԱ քաղաքականությունը հաստատած ղեկավար անձի կամ նրա իրավասությունների փոփոխության դեպքում:

11. ՏԱ քաղաքականությունը պետք է ընդգրկի Կազմակերպության կողմից տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառությամբ մշակվող, պահպանվող, ներկայացվող, ստացվող և փոխանցվող ամբողջ տեղեկատվությունը, համակարգերը, միջոցները, ծրագրերը, տվյալները, ցանցային համակարգերը, ֆիզիկական պաշտպանության համակարգերը և անձնակազմը՝ առանց բացառությունների:

12. Տեղեկատվական հարաբերությունների սուբյեկտներ են հանդիսանում.

1) Կազմակերպությունը, որպես տեղեկատվական ռեսուրսների սեփականատեր,
2) Բաժինները և կառուցվածքային ստորաբաժանումները,
3) Պաշտոնատար անձինք և անձնակազմը,
4) Տվյալ Կազմակերպությունում տեղեկատվական ռեսուրսների հետ առնչվող այլ անձինք,
5) Համագործակցող Կազմակերպության սույն կետի 1-4-րդ ենթակետերում նշված սուբյեկտները (հիմնական Կազմակերպության տեղեկատվության հետ առնչվելու չափով):

Գլուխ 5. Արտակարգ իրավիճակներում գործողությունների ծրագիր

13. Կազմակերպության գործարար գործընթացների անընդհատության ապահովման գործընթացի անբաժանելի մաս պետք է կազմի տեղեկատվական տեխնոլոգիաների անվտանգության ապահովման՝ արտակարգ իրավիճակներում գործողությունների ծրագիրը, որով պետք է սահմանվեն հետևյալ նվազագույն կետերը.

1) Արտակարգ իրավիճակներում գործողությունները ղեկավարող աշխատանքային խումբը՝ պատասխանատվության շրջանակներով,

2) Խմբի անդամի անունը, ով իրավասու է հայտարարելու Արտակարգ իրավիճակ,
3) Արտակարգ իրավիճակ լինելու հավանականությունը,
4) Արտակարգ իրավիճակների դասակարգում՝ ըստ հավանական վնասի մեծության,
5) Յուրաքանչյուր իրավիճակի համար կանխատեսվող վերականգնման միջոցառումները և ժամանակը:

Գլուխ 6. Տեղեկատվական համակարգերում առկա ռիսկերի կառավարման կանոնակարգեր, կարգեր և/կամ կանոններ

14. ՏԱ ապահովման քաղաքականության իրագործման համար Կազմակերպության կողմից պետք է մշակվեն համապատասխան կանոնակարգեր, կարգեր և/կամ կանոններ, որոնցով կկարգավորվի ՏԱ ապահովման հետ կապված յուրաքանչյուր գործընթաց: Այդ կարգերով (կանոնակարգեր, կանոններ) պետք է սահմանվեն Կազմակերպության ծրագրային ապահովման և ավտոմատացված համակարգերի (տեխնիկածրագրային համակարգերի) հետևյալ կետերը.

1) տեխնիկածրագրային համակարգերի ստեղծման նպատակների և հիմնավորումների սահմանման անհրաժեշտությունը և դրանց շահագործման ընթացակարգերը,
2) տեխնիկածրագրային համակարգերի տարրերի տեղակայման վայրերը, դրանց կազմը, կառուցվածքը, այլ օբյեկտների հետ կապը,
3) տեխնիկածրագրային համակարգերում շրջանառվող տեղեկատվության խմբերը, օգտագործման ընթացակարգերը և տեղեկատվության հասանելիության մակարդակները,
4) տեխնիկածրագրային համակարգերում շրջանառվող տեղեկատվության խմբերի պաշտպանության կազմակերպման կանոնները:

15. Սույն կարգի 14-րդ կետի 1-4-րդ ենթակետերով սահմանված կետերը պետք է անդրադառնան հետևյալ խնդիրներին.

1) ***տեխնիկածրագրային համակարգերի ստեղծման նպատակների և հիմնավորումների սահմանման անհրաժեշտությունը և դրանց շահագործման ընթացակարգերը.*** այս հատվածում ներկայացվում են տեխնիկածրագրային համակարգերի կիրառության նպատակները. որտեղ և ինչ եղանակներով են դրանք օգտագործվելու, կիրառման անհրաժեշտությունը և այլն: Տեխնիկածրագրային համակարգերը պետք է կիրառվեն/ստեղծվեն այս կամ այն գործընթացների որակական հատկանիշների բարձրացման, հսկողության, արագագործության, ժամանակի խնայողության, վերլուծության և կանխատեսման նպատակներով, որոնք իրենց հերթին կկրճատեն ծախսերը և, հետևաբար, կմեծացնեն Կազմակերպության եկամտաբերությունը:
2) ***տեխնիկածրագրային համակարգերի տարրերի տեղակայման վայրերը, դրանց կազմը, կառուցվածքը, այլ օբյեկտների հետ կապը.*** այս մասում նկարագրվում են տեխնիկածրագրային համակարգերի գործունեության յուրահատկությունները, այսինքն՝ ինչ կապեր կան տեխնիկածրագրային համակարգերի տարբեր բաղադրիչների միջև, ինչպիսի տեխնիկական միջոցներ են կիրառվում, առկա է արդյոք կապ այլ կազմակերպությունների հետ և ինչպես է դա իրականացվում, ինչ կապուղիներ են օգտագործվում, ինչ ծրագրային ապահովում է անհրաժեշտ տեխնիկածրագրային համակարգերի գործունեության համար:
3) ***տեխնիկածրագրային համակարգերում շրջանառվող տեղեկատվության խմբերի պաշտպանության կազմակերպման կանոնները.*** այստեղ պետք է նկարագրվեն, թե գաղտնիության ինչպիսի մակարդակներ են կիրառվում, ինչ տեսակի փաստաթղթեր են շրջանառվում տեխնիկածրագրային համակարգերում, որ տեղեկատվությունն է ենթակա պաշտպանության և ինչ նորմատիվային/կարգավորիչ ակտերի հիման վրա:
4) ***տեխնիկածրագրային համակարգերում շրջանառվող տեղեկատվության խմբերի պաշտպանության կազմակերպման կանոնները.*** պետք է նկարագրվեն տեխնիկածրագրային համակարգերում շրջանառվող տեղեկատվական ռեսուրսների օգտագործողների խմբերը և այս խմբերի իրավասությունների շրջանակները:

16. Տեղեկատվական անվտանգության ապահովման վերաբերյալ մշակվող կանոնակարգիչ փաստաթղթերով պետք է սահմանվեն այն խնդիրները և միջոցառումները, որոնք ուղղված կլինեն Կազմակերպության կողմից տեղեկատվական ռեսուրսների պաշտպանության ապահովման նպատակների իրականացմանը: Կանոնակարգերում, կարգերում և/կամ կանոններում պետք է սահմանվեն նվազագույնը հետևյալ խնդիրները.

1) Տեղեկատվության պաշտպանության նպատակը. ՏԱ ապահովման համար մշակվող փաստաթղթերում նկարագրված բոլոր միջոցները, միջոցառումները և պահանջները նախատեսված են տեղե-

կատվական հարաբերությունների սուբյեկտների պաշտպանության ապահովման համար՝ հնարավոր նյութական, ֆիզիկական, բարոյահոգեբանական և այլ վնասներից, որոնք կարող են առաջանալ Կազմակերպության տեխնիկածրագրային համակարգերում շրջանառվող տեղեկատվության գործունեության ընթացքի մեջ ոչ միտումնավոր (պատահական) կամ միտումնավոր ներխուժման, ինչպես նաև Կազմակերպության սեփական աշխատակիցներին (ինչպես նաև Կազմակերպությանը ծառայություններ մատուցող այլ ընկերությունների աշխատակիցներին) հայտնի դարձած դասակարգված տեղեկատվության, ոչ միտումնավոր (պատահական) կամ միտումնավոր բացահայտման արդյունքում:

17. Քանի որ մարդկային գործոնը մեծ դեր է խաղում Կազմակերպության տեղեկատվական անվտանգության ապահովման համար, առաջին հերթին պետք է կանոնակարգվեն տեղեկատվության հասանելիության խնդիրները:

1) ***Հասանելիության իրավասությունների տրամադրում.*** Կանոնակարգերով, կարգերով և/կամ կանոններով պետք է սահմանվեն տեղեկատվական ռեսուրսների դասակարգման (գաղտնիության մակարդակները, գաղտնի համարվող տեղեկատվության բնութագրիչները) և հասանելիության ապահովման սկզբունքները: Տեղեկատվության հասանելիության սկզբունքները պետք է կառուցվեն՝ հաշվի առնելով օգտագործողների բնութագրիչները (ինքնություն, իրավասությունների մակարդակ), տեղեկատվական ռեսուրսի բնութագրիչները (դասակարգման մակարդակ, փաստաթղթի համար, տեղեկատվական ռեսուրսի աղբյուր և այլն), ինչպես նաև այլ բնութագրիչներ՝ ինչպիսիք են ամիս-ամսաթիվ, աշխատանքային ժամեր, հասանելիության միջոցներ և այլն:

18. Սույն կարգի 17-րդ կետի 6-րդ ենթակետում նշված բնութագրիչները ներկայացվում են չորս հիմնական խմբերով.

1) ***Օգտագործողների բնութագրիչներ.*** ընդհանուր առմամբ օգտագործողի ցանկացած բնութագրիչ կարող է կիրառվել (սեռը, տարիքը, ծննդավայրը և այլն): Կանոնակարգիչ փաստաթղթերով առնվազն պետք է սահմանվեն հետևյալ բնութագրիչները.
   ա. *Հասանելիության մակարդակ.* այս կետը սահմանվում է ՀՀ օրենքների, միջազգային պայմանագրերի, Կենտրոնական բանկի նորմատիվ ակտերի պահանջների, որոնք վերաբերում են գաղտնի համարվող տեղեկատվության պաշտպանությանը (պետական, բանկային, առևտրային, անձնական և այլ գաղտնիք համարվող տեղեկատվություն) և տվյալ տեղեկատվական ռեսուրսի դասակարգման մակարդակի հիման վրա:
   բ. *Անհրաժեշտ է իմանալ (need - to - know).* այս բնութագրիչը պետք է կցվի այն աշխատակիցներին, անձանց, որոնք աշխատանքային պարտականություններից ելնելով պետք է ունենան հասանելիության իրավասություններ այս կամ այն տեղեկատվական ռեսուրսին:
   գ. *Դերերի բաժանում.* օրինակ՝ օգտագործողին կարող է տրվել «սովորական օգտագործող» բնութագրիչը՝ իր համապատասխան իրավասություններով: Դերերը կարող են տրամադրվել ըստ Կազմակերպությունում զբաղեցրած պաշտոնների և/կամ իրականացվող գործառույթների:
   դ. *Խմբային պատկանելիություն.* այս բնութագրիչը կարող է ներառել օգտագործողի ազգությունը, երկիրը, կազմակերպությունը և այլն:
2) ***Օբյեկտների բնութագրիչներ.*** իրավասությունների տրամադրման որոշման կայացման համար պետք է կիրառվեն նաև օբյեկտների բնութագրիչները: Այդ բնութագրիչներն են.
   ա. *Զգայունության աստիճան.* ցանկացած տեղեկատվություն պետք է դասակարգվի ըստ բացահայտման նկատմամբ զգայունության աստիճանի (չդասակարգվող, փակ (կոնֆիդենցիալ), գաղտնի կամ հույժ գաղտնի): Պետք է սահմանվեն հասանելիության ընթացակարգերը՝ ըստ համապատասխան դասակարգման աստիճանների:
   բ. *Տեղեկատվության նույնականացուցիչներ.* պետք է կիրառվեն տեղեկատվության նույնականացուցիչներ, օրինակ՝ տեղեկատվության սկզբնաղբյուրը կամ տեղեկատվության ստեղծողը, տեղեկատվության սեփականատերը և փաստաթղթի համարը:
   գ. *Հասանելիության կառավարման ցուցակ.* պետք է թվարկվեն այն անձինք, ովքեր հասանելիության իրավասություններ ունեն տվյալ տեսակի տեղեկատվությանը: Տեղեկատվության սեփականատերը կարող է նշել իրեն պատկանող տեղեկատվության օգտագործողներին:
3) ***Արտաքին պայմաններ.*** ՏԱ ապահովման համար մշակված փաստաթղթերով սահմանված որոշ կետեր պետք է ներկայացնեն արտաքին պայմանների բնութագրիչները, ինչպիսիք են՝ աշխարհագրական դիրքը, ժամանակը և նմանատիպ այլ տեղեկություններ: Մեծ ուշադրություն պետք է դարձվի փոփոխվող բնութագրիչներին, մասնավորապես.
   ա. *Աշխարհագրական դիրք.* հասանելիության իրավասություններ պետք է տրամադրվեն՝ այդ թվում նաև հիմք ընդունելով աշխարհագրական վայրը (օրինակ՝ տվյալ տեղեկատվությունը հասանելի է միայն գլխամասից կամ մասնաճյուղից):

բ. *ժամանակ.* որոշակի տեսակի տեղեկատվությանը հասանելիության իրավասությունները կարող են տրամադրվել կոնկրետ ժամերին:

4) ***Տվյալների բովանդակություն.*** հասանելիության իրավասությունները պետք է տրամադրվեն՝ ելնելով տեղեկատվության արժեքավորության աստիճանից:

Գլուխ 7. Գործարար ծրագրեր, ընթացակարգեր, ուղեցույցներ, պայմանագրեր

19. Կազմակերպությունը՝ իր տեղեկատվական անվտանգության ապահովման համար պետք է մշակի որոշակի գործարար ծրագրեր, ընթացակարգեր, ուղեցույցներ, պայմանագրեր, որոնք պետք է նկարագրեն տեղեկատվական ռեսուրսների պաշտպանության ապահովման նպատակների իրագործման ձևերը, ուղիները, տեղեկատվության պաշտպանության համակարգի հիմնական խնդիրների լուծումները: Նշված փաստաթղթերով պետք է սահմանվեն հետևյալ խնդիրների լուծման ուղիները.

1) Դասակարգված տեղեկատվություն պարունակող փաստաթղթերի օգտագործում, պահպանում և ոչնչացում, այդ թվում՝ կոդերի, էլեկտրոնային բանալիների ցուցակների կամ դրանց պատճենների ոչնչացում,
2) Գաղտնաբառերի օգտագործում և պահպանում,
3) Օգտագործողների նույնականացում և իրավասությունների տրամադրում,
4) Օգտագործողներին նույնականացման (իդենտիֆիկացիա) և իրավասությունների (աուտենտիֆիկացիա) հաստատման համար կիրառվող/կիրառվելիք միջոցների ցանկը և տվյալ գործընթացը բնութագրող ընթացակարգը,
5) Տեղեկատվական պաշտպանության գործընթացների նկատմամբ մոնիթորինգի իրականացում,
6) էլեկտրոնային նույնականացուցիչ ֆայլերի օգտագործում և պահպանում,
7) Օգտագործողների գրանցում և հեռացում,
8) Տեխնիկածրագրային համակարգերի և տեղեկատվության ինվենտարիզացիա (տեղեկատվության սեփականատերերի սահմանում),
9) Արտաքին կրիչների օգտագործում և պահպանում,
10) Հակավիրուսային համակարգերի կիրառություն,
11) Աշխատակիցների պարտականությունների տարանջատում և դասակարգում,
12) Արտաժամյա աշխատանքների իրականացում,
13) Սխալների բացահայտման, անվտանգության կանոնների խախտման դեպքերի քննման, մեղավորների պատժման և աշխատանքների մշտական վերահսկման ընթացակարգեր,
14) Պահուստային կրկնօրինակում, պահպանում և վերականգնում,
15) Արխիվների հետ աշխատանք, պահպանման ժամկետներ, պաշտպանության միջոցներ, օգտագործողների ցանկ, հասանելիության մակարդակ, արխիվացված տեղեկատվության վերականգնում,
16) Կիրառվող ծրագրային համակարգերի դասակարգում,
17) Հնարավոր սպառնալիքների մոդելների կառուցում,
18) Կիրառվող ծրագրային փաթեթների թեստավորում,
19) «Գործառնական օր» ծրագրային համակարգի և այլ ծրագրային համակարգերի բացում/փակում,
20) Տեխնիկական առաջադրանքների կազմում,
21) Կազմակերպության կողմից շահագործվող ծրագրերի վերջնական տարբերակի ծրագրային կոդերում փոփոխությունների նախաձեռնում, իրականացում, թեստավորում և վերահսկում,
22) Հիմնական սերվերների օգտագործում, կառավարում և վերականգնում,
23) Ցանցերի կառավարման, ցանցային անվտանգության համար՝
    ա. տեղեկատվության ֆիլտրացման պահանջներ,
    բ. ներքին տեղեկատվական ցանցի ենթակառուցվածքի ֆիզիկական և տրամաբանական ճարտարապետությունը,
    գ. ներքին տեղեկատվական ցանցի պաշտպանության մեխանիզմներ, ցանցային սարքավորումների կարգաբերումներ:
24) Հեռակա աշխատանքների իրականացման համար՝
    ա. հեռակա ադմինիստրավորման համակարգեր,
    բ. հեռակա աշխատանքների իրականացման պահանջներ,
    գ. հեռակա աշխատանքների իրականացման նպատակները և դեպքերը:
25) Անլար ցանցի կիրառման համար՝
    ա. անլար միացումների նպատակները և անլար միացումները թույլատրող սարքերի կարգաբերումները:
    բ. անլար միացումների համար կիրառվող անվտանգության միջոցները և միջոցառումները:

26) էլ-փոստի և համացանցի օգտագործման պահանջներ,
27) Պատահարների գրանցման և մոնիթորինգի իրականացման պահանջներ,
28) Վճարային պրոցեսների անվտանգության պահանջներ,
29) Անընդհատության ապահովման միջոցառումներ,
30) Տեխնիկական սարքավորումների (միջոցների) ֆիզիկական ամբողջականության ապահովման արդյունավետ միջոցների կիրառություն,
31) Կազմակերպության իրավաբանական պաշտպանության կազմակերպում՝ այլ ընկերությունների հետ փոխհարաբերությունների (պատվիրակում, տեղեկատվության փոխանակում և այլն) ընթացքում, վերջիններիս սպասարկող անձնակազմի կողմից ոչ միտումնավոր կամ չարամիտ (անթույլատրելի) գործողությունների բացասական հետևանքներից,
32) Անձնակազմի ուսուցման և համալրման հետ կապված չափանիշները և մոտեցումները,
33) Կիրառվելիք կրիպտոգրաֆիկական և այլ պաշտպանական միջոցները,
34) ՏԱ ապահովման համակարգի արդյունավետության հսկողության իրականացման հիմնադրույթները,
35) Կազմակերպության գործունեության տարածքից դուրս թողնված (մոռացված) տեղեկատվության կրիչների ապօրինի տիրապետումը կողմնակի անձանց կողմից,
36) Տեխնիկածրագրային համակարգերի նախագծման փուլում Կազմակերպության աշխատակիցների կողմից թույլ տրված սխալների, աշխատանքային կանոնների խախտման կամ ոչ պատշաճ կատարման արդյունքում ՏԱ ապահովման համակարգի վրա բացասական ազդեցությունը,
37) Պատահարների վերաբերյալ տվյալների հավաքագրման, գրանցման և մշակման համակարգի գործարկում,
38) Տեխնիկածրագրային համակարգերի միջոցով մշակվող և ցանցի միջոցով փոխանցվող տեղեկատվության ծածկագրում,
39) Հիմնական սերվերից պահուստային սերվերին և հակառակը անցման սկզբունքները,
40) Սերվերային սենյակի մուտքի և ելքի, սերվերային սենյակում միաժամանակ գտնվող մարդկանց քանակի, սերվերային սենյակներում աշխատանքների իրականացման ժամանակ ուղեկցող անձանց վերաբերյալ կանոնները, ընթացակարգը,
41) Սերվերային սենյակի պարամետրերը կանոնակարգող փաստաթղթի մշակում (ջերմաստիճան, խոնավություն, լուսավորություն, ֆիզիկական անվտանգություն և այլն),
42) Տվյալների շտեմարաններում պահվող դասակարգված տվյալների ծածկագրում կամ համարժեք անվտանգության միջոցառման նախածեռնում,
43) Ծրագրային համակարգերի տեղադրման, կարգաբերման վերաբերյալ կանոնները, ընթացակարգը:
44) Սույն կետով սահմանված բոլոր կանոնակարգիչ փաստաթղթերում պետք է նշվեն՝
    ա. փաստաթղթի վերանայման (թարմացման) ամսաթիվը,
    բ. փաստաթղթի ընդունման համապատասխան որոշման համարը,
    գ. փաստաթղթի պատասխանատուի անունը, ազգանունը և պաշտոնը,
    դ. փաստաթղթի համարը (նույնականացուցիչը):
45) Սույն կետով սահմանված բոլոր կանոնակարգիչ փաստաթղթերում պետք է՝
    ա. սահմանված լինեն փաստաթղթում տեղ գտած տերմինները: Որոշ հասկացություններ, հատկապես տեղեկատվական տեխնոլոգիաներին վերաբերող, կարող են ունենալ այլ իմաստային նշանակություն, որոնք պետք է բացատրվեն տվյալ փաստաթղթի նպատակների տեսանկյունից:
    բ. ներկայացվեն այն անձինք (աշխատատեղերը/պաշտոնները), ում (որոնց) վերաբերում է կարգավորիչ փաստաթուղթը: Օրինակ՝ որոշ փաստաթղթեր կարող են վերաբերել միայն ամբողջ կամ կես դրույքով աշխատող աշխատակիցներին, ինչպես նաև կարող են վերաբերել ցերեկային կամ գիշերային հերթափոխով աշխատող աշխատակիցներին:
    գ. մշակված լինեն մատչելի լեզվով, հակիրճ ձևակերպված պահանջներով և չլինեն երկիմաստ:
46) Սույն կարգով սահմանված նվազագույն պայմաններից բխող բոլոր միջոցառումների իրականացման արդյունքներով պետք է կազմվեն արձանագրություններ, որոնցում պետք է նշվեն՝
    ա. միջոցառման տեսակը,
    բ. միջոցառման մասնակիցների տվյալները,
    գ. միջոցառման անցկացման վայրը,
    դ. միջոցառման անցկացման ամիս-ամսաթիվն ու ժամը,
    ե. պատասխանատու աշխատակիցների տվյալները,

զ. միջոցառման ղեկավարի տվյալները,
է. եզրակացությունը (կարծիքը),
ը. բոլոր մասնակիցների ստորագրությունները:

47) Կազմակերպության կողմից կիրառվող թղթային գրանցամատյանների վարման ընթացակարգեր: Ընդ որում, թղթային գրանցամատյանները պետք է լինեն առնվազն՝
ա. էջանշված,
բ. տողերը համարակալված,
գ. գրանցամատյանի վարման սկզբի ամսաթիվը նշված,
դ. նշված լինի առարկան՝ ինչի համար վարվում է գրանցամատյանը,
ե. ընդունողի և հանձնողի ստորագրություններով,
զ. ընդունման և հանձնման ամսաթվերով,
է. պարունակի մատյանի վարողի տվյալները և գտնվելու վայրը:

Գլուխ 8. Գործարար գործընթացների անընդհատության ապահովում

20. Կազմակերպությունն առնվազն երեք տարին մեկ անգամ, ինչպես նաև արտակարգ իրավիճակներում գործողությունների նոր ծրագրի մշակման դեպքում պետք է իրականացնի արտակարգ իրավիճակների սցենարների փորձարկումներ՝ հաշվարկելով արտակարգ իրավիճակների հետևանքների վերացման համար անհրաժեշտ ժամանակը և ռեսուրսները:

21. Կազմակերպության կողմից սահմանված ժամկետներում, մասնավորապես՝ առնվազն կիսամյակը մեկ անգամ, իսկ տեխնիկական անձնագրերում՝ վեց ամսից քիչ սահմանված ժամանակահատվածներում դրանց համապատասխան պետք է ստուգվեն սարքավորումների աշխատունակությունը:

22. Կազմակերպության ցանցային սարքավորումները և անվտանգության բոլոր համակարգերը պետք է ապահովված լինեն անխափան էլեկտրասնուցման համակարգերով:

23. Անխափան էլեկտրասնուցման աղբյուրներ պետք է ունենան նաև առնվազն այն համակարգիչները, որոնք ապահովում են Կազմակերպության բնականոն գործունեությունը և առօրյա աշխատանքը:

24. Կազմակերպության էլեկտրասնուցման համակարգը պետք է կազմակերպված լինի այնպես, որ ապահովի տեխնիկածրագրային համակարգերի անխափան բնականոն աշխատանքը:

25. Կազմակերպությունը պետք է ապահովի կարևոր սարքավորումների և ծրագրային փաթեթների հնարավորինս կարճ ժամանակահատվածում փոխարինելիությունը:

26. Կազմակերպության կողմից առնվազն «Գործառնական օր» ծրագրային համակարգերի վրա կատարվող պրոֆիլակտիկ աշխատանքները պետք է իրականացվեն Կազմակերպության աշխատանքային ժամերից դուրս և ավարտվեն մինչև Կազմակերպության աշխատանքային օրվա սկիզբը:

27. Կազմակերպության բոլոր տարածքային ստորաբաժանումներում պետք է առկա լինի գործող գեներատոր-շարժիչ կամ այլընտրանքային հոսանքի աղբյուր:

Գլուխ 9. Պահուստավորում և արխիվացում

28. Կազմակերպության կողմից օգտագործվող առնվազն այն ծրագրային համակարգերում, որտեղ շրջանառվում է Կազմակերպության հաճախորդների և/կամ ֆինանսական գործառնությունների վերաբերյալ որևէ տեղեկատվություն, պետք է առկա լինի պահուստային կրկնօրինակման հնարավորություն:

29. Կազմակերպության կողմից սահմանված պարբերականությամբ պետք է իրականացվեն օգտագործվող ծրագրային համակարգերի և դրանց տեղեկատվական բազաների պահուստային կրկնօրինակում և արխիվացում:

30. Պահուստային կրկնօրինակները և արխիվները պետք է պահպանվեն տեղեկատվության գաղտնիության աստիճանի դասակարգմանը համապատասխան:

31. Կազմակերպության բոլոր պահուստային կրկնօրինակները և արխիվները չեն կարող պահպանվել բաց տեքստով:

32. Կազմակերպության պահուստային կրկնօրինակները և արխիվները պետք է վարվեն տարբեր ֆիզիկական կրիչների կամ համակարգիչների վրա:

33. Կազմակերպության բոլոր ընթացիկ և/կամ պահուստային կրկնօրինակները Կազմակերպության կողմից սահմանված պարբերականությամբ պետք է փորձարկվեն և ուսումնասիրվեն:

34. Կազմակերպության կողմից սահմանված որոշակի պարբերականությամբ պետք է իրականացվի «Գործառնական օր» ծրագրային համակարգի պահուստային տարբերակին անցման-վերականգնման գործողությունը:

35. Կազմակերպության պահուստային (ռեզերվային) սերվերներն իրենց կողմից կանխորոշված պարբերականությամբ պետք է փորձարկվեն:

36. Համապատասխան սերվերային համակարգերի «տաք» և «սառը» ռեզերվների ընտրությունն իրականացվում է Կազմակերպության ղեկավարության վերին օղակի կողմից՝ համապատասխան հիմնավոր որոշմամբ:

Գլուխ 10. Հիմնական ռիսկերը

37. Կազմակերպությունը պետք է մշակի համապատասխան փաստաթուղթ, որտեղ մանրամասն նկարագրված են ՏԱ ռիսկերի հնարավոր մոդելները և դրանց աղբյուրները, տվյալ ռիսկերի իրագործման եղանակները, տեղեկատվության արտահոսքի ուղիները, պետք է տրվի «միտումնավոր անթույլատրելի գործողություններ» հասկացողության սահմանումը: Այս փաստաթուղթը հանդիսանում է գաղտնի և պետք է հասանելի լինի միայն արտոնագրված օգտագործողներին:

38. Նշված փաստաթղթում առաջին հերթին պետք է նկարագրվեն Կազմակերպության համար նշանակալից համարվող ռիսկերի տեսակները և դրանց իրագործման հնարավոր ճանապարհները: Ընդ որում, ռիսկերի տեսակները պետք է բաժանվեն առնվազն հետևյալ խմբերի.

1) գաղտնիության խախտում (գաղտնի տեղեկատվության հրապարակում, արտահոսք և այլն),
2 աշխատունակության խախտում (գործարար գործընթացների ապակազմակերպում),
3) ամբողջականության խախտում (տեղեկատվության խեղաթյուրում, փոփոխում, հափշտակում, ոչնչացում և այլն),
4) տեղեկատվության հասանելիության խախտում:

39. Ռիսկերի հնարավոր աղբյուրները պետք է դասակարգվեն ըստ *ներքին (տվյալ Կազմակերպության) ռիսկերի և արտաքին ռիսկերի:*

1) Սույն կետում նշված ներքին ռիսկեր են համարվում ոչ միտումնավոր (սխալմամբ, պատահական, չմտածված, ոչ չարամիտ, ոչ շահադիտական նպատակներով, օրինակ՝ անփութության կամ անտեղյակ լինելու պատճառով, հետաքրքրությունից ելնելով կատարված) և միտումնավոր (շահադիտական նպատակներով, երրորդ անձանց ճնշմամբ, վրեժ լուծելու ցանկությունից ելնելով, չարամտորեն և այլն) կերպով կատարված գործողությունները:
2) Սույն կետում նշված արտաքին ռիսկեր են համարվում Կազմակերպության աշխատակից չհամարվող անձանց կողմից միտումնավոր և ոչ միտումնավոր գործողությունների հետևանքով առաջացող հնարավոր ռիսկերը Կազմակերպության տեղեկատվական անվտանգության համար, ինչպես նաև այն արտաքին ռիսկերը, որոնք չեն կարող կառավարվել Կազմակերպության կանոնակարգիչ փաստաթղթերով:

40. Կազմակերպությունը պետք է հատուկ ընթացակարգեր սահմանի իր անձնակազմի և երրորդ անձանց ՏԱ ապահովման կանոնների ուսուցման կամ ծանոթացման նպատակով՝ նշված անձանց կողմից Կազմակերպության գաղտնի տեղեկատվության միտումնավոր կամ ոչ միտումնավոր արտահոսքը (այլ անձանց բացահայտումը) կանխելու համար: Նշված կանոնները պետք է վերաբերեն նաև բանավոր կերպով անձնակազմին և/կամ երրորդ անձանց տրամադրվող (հայտնի դարձած) դասակարգված տեղեկատվության անվտանգության ապահովմանը:

41. Կազմակերպությունը պետք է նկարագրի «խախտողի մոդելը», պետք է տրվի խախտողի սահմանումը, և նա դասակարգվի ըստ հետևյալ խմբերի.

1) անփորձ օգտագործող,
2) զեղծարար,
3) արտաքին կամ ներքին խախտող:

42. Կազմակերպության կողմից պետք է սահմանվեն վնասի այն չափերը, որոնք կարող են պատճառել սույն կարգի 41-րդ կետում նշված խմբի անձինք իրենց գործողություններով:

43. Սույն կարգի 41-րդ կետում նշված խմբերը սահմանելուց պետք է հաշվի առնվի աշխատանքից ազատված անձանց ենթախումբը, որոնք կարող են օգտագործել իրենց գիտելիքները Կազմակերպության ներքին գործընթացների վերաբերյալ, Կազմակերպությունում կիրառվող պաշտպանության միջոցների և միջոցառումների, հասանելիության իրավասությունների տրամադրման ընթացակարգերի վերաբերյալ՝ պաշտպանված տեղեկատվության հափշտակման և նմանատիպ այլ անթույլատրելի գործողությունների նպատակով (տեղեկատվական անվտանգության տեսանկյունից՝ այս անձինք, ինչպես նաև տվյալ Կազմակերպության անձնակազմը հանդիսանում են առավել վտանգավոր խմբերը):

Գլուխ 11. Կազմակերպչական կառուցվածք

44. Կազմակերպությունը պետք է ունենա Տեղեկատվական անվտանգության հիմնախնդիրներով զբաղվող ստորաբաժանում (այսուհետև՝ ՏԱ ստորաբաժանում) կամ անձ: ՏԱ ստորաբաժանման կամ անձի բացակայության դեպքում պետք է առկա լինի տվյալ գործառույթների պատվիրակման պայմանագիր ՏԱ ապահովման ոլորտում մասնագիտացված ընկերության հետ:

45. Կազմակերպության Տեղեկատվական տեխնոլոգիաների ստորաբաժանման աշխատակիցների պարտականությունները պետք է բաշխված լինեն սույն կարգի Հավելված 1-ում նշված տիպային պարտականությունների անհամադրելիության մատրիցին համապատասխան:

46. Կազմակերպության ադմինիստրատորները չպետք է ունենան որևէ ֆինանսական գործարք կատարելու իրավասություն: Ֆինանսական գործարք է համարվում նաև գործառնական օրվա բացման/փակման իրականացումը:

47. Կազմակերպության և բոլոր աշխատակիցների միջև պետք է ստորագրվի տեղեկատվության գաղտնիության պահպանման (չբացահայտման) համաձայնագիր:

48. Կազմակերպությունում ֆինանսական գործարքների, օգտագործողների գրանցման ու իրավասությունների տրամադրման բոլոր աշխատանքները պետք է կազմակերպված լինեն՝ կիրառելով երկակի վերահսկման մեխանիզմը, այսինքն՝ մուտքագրումը, ստուգումը և հաստատումը պետք է կատարվեն տարբեր աշխատակիցների կողմից: Պետք է հնարավորինս բացառված լինի ցանկացած գործողության միանձնյա իրականացումը, այսինքն՝ գործողության նախաձեռնողը, ստուգողը և հաստատողը պետք է լինեն տարբեր՝ առնվազն երկու աշխատակից, ընդ որում՝ թույլատրելի է միայն ստուգման և հաստատման գործընթացի համատեղումը: Սույն կետում նշված պահանջները, բացառությամբ՝ օգտագործողների գրանցման ու իրավասությունների տրամադրման, կարող են չկատարվել Կազմակերպության կողմից միայն հստակ և գրավոր ձևով պատճառաբանված հիմնավորման առկայության դեպքում:

49. Կազմակերպության օգտագործողներին տրված իրավասությունները պետք է համապատասխանեն տվյալ աշխատակցի աշխատատեղի նկարագրին:

50. Կազմակերպության յուրաքանչյուր աշխատակից մեկ համակարգում պետք է ունենա միայն մեկ օգտագործողի միջոցով աշխատելու հնարավորություն, իսկ պահանջի կատարման անհնարինության դեպքում անհրաժեշտ է Կազմակերպության ղեկավարության վերին օղակի կողմից հաստատված հստակ հիմնավորման առկայություն, աշխատակցին տրամադրված յուրաքանչյուր հաջորդ օգտագործողը չպետք է ունենա հիմնական օգտագործողի հետ խաչվող կամ հիմնական օգտագործողի գործողությունների երկակի վերահսկման մեխանիզմը խախտող իրավասություն:

51. Կազմակերպության կողմից կիրառվող բոլոր «Գործառնական օր» ծրագրային համակարգերը, հերթական և արտահերթ ձևափոխությունները, թարմացումները և կամայական այլ փոփոխությունները հիմնական կիրառումից առաջ պետք է փորձարկվեն և հիմնական աշխատանքի տեղափոխվեն միայն փորձարկման դրական եզրակացության դեպքում:

52. Կազմակերպության ներքին տեղեկատվական ցանցից դուրս գտնվող կամայական աշխատակայանից յուրաքանչյուր հեռակա միացում պետք է իրականացվի բացառապես Կազմակերպության ղեկավարության վերին օղակի թույլտվությամբ՝ նախօրոք արտոնագրված օգտագործողների կողմից: Արտաքին մուտքերի անհրաժեշտության դադարման դեպքում տվյալ մուտքերն անմիջապես ապաակտիվացվում են:

53. Կազմակերպության համապատասխան աշխատակիցների կողմից պարբերաբար պետք է իրականացվեն Կազմակերպության առնվազն «Գործառնական օր» ծրագրային համակարգի և այլ կարևոր ու հույժ կարևոր դասակարգված ծրագրային համակարգերի էլեկտրոնային գրանցամատյանների, հեռակա աշխատանքների հատուկ գրանցամատյանների, ինչպես նաև հեռացված, մերժված և/կամ փոփոխված գործարքների/փաստաթղթերի մոնիթորինգ, որոնց արդյունքներն առնվազն եռամսյակը մեկ պետք է ներկայացվեն գործադիր ղեկավարությանը:

54. Կազմակերպությունում պետք է իրականացվի Կազմակերպության տեղեկատվական կայքի անվտանգության և ամբողջականության պարբերական ուսումնասիրություն:

55. Կազմակերպությունում պետք է իրականացվի միջազգային տեղեկատվական ցանցում (համացանցում) Կազմակերպության մասին հրապարակումների ուսումնասիրություն:

56. Կազմակերպությունում հեռակա աշխատանքների (հեռակա փորձարկումների) իրականացման դեպքում՝

1) նախապես որոշվում են հեռակա աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ և հասանելի շրջանակները, պլանավորվում և համաձայնեցվում Կազմակերպության ղեկավարության վերին օղակի հետ,

2) ստեղծվում (տրամադրվում) են առանձին օգտագործողներ անհատական և սահմանափակ արտոնություններով՝ կախված կանխորոշված աշխատանքի տեսակից,
3) իրականացված հեռակա աշխատանքների վերաբերյալ տվյալները գրանցվում են հատուկ գրանցամատյաններում:

Գլուխ 12. Տեղեկատվական անվտանգություն պահանջներ

57. Կազմակերպության տեղեկատվական անվտանգության հարցերով զբաղվում է ՏԱ պատասխանատուն, ՏԱ ստորաբաժանումը կամ Կազմակերպությանը համապատասխան պատվիրակման ծառայություններ մատուցող երրորդ անձը:

58. Կազմակերպության գաղտնագրման բանալիները պետք է փոփոխվեն առնվազն վեց ամիսը մեկ անգամ, եթե Կազմակերպության համար ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված այլ իրավական ակտերով ավելի երկար ժամանակ նախատեսված չէ:

59. Կազմակերպությունը, ՏԱ ապահովմանն ուղղված փաստաթղթերի, ընթացակարգերի, կանոնների և այլ կանոնակարգիչ փաստաթղթերի մշակման ժամանակ, պետք է հիմնվի այդ թվում նաև «Արգելված է ամեն ինչ, բացի …» սկզբունքի վրա:

60. Կազմակերպության կողմից կիրառվող բոլոր «Գործառնական օր» ծրագրային համակարգերի, տեղեկատվական բազաների, ցանցային համակարգերի կառավարման գլխավոր օգտագործողը (ադմինիստրատորները)՝ առկայության դեպքում պետք է կասեցվեն, իսկ գաղտնաբառերը փակ և պատասխանատու աշխատակիցների կողմից կնքված ծրարներով պետք է պահպանվեն Կազմակերպության անվտանգության հարցերով զբաղվող ստորաբաժանման չհրկիզվող պահարանում: Այդ գաղտնաբառերը պետք է կիրառվեն միայն խիստ անհրաժեշտության, Կազմակերպության կողմից սահմանված դեպքերում և միայն գործադիր ղեկավարության գրավոր հրամանի առկայության պարագայում:

61. ՏԱ պատասխանատու անձը, ստորաբաժանումը կամ երրորդ անձը պետք է առնվազն իրականացնի՝
1) համակարգչային ցանցերի և ավտոմատացված համակարգերի անվտանգության միջոցառումների պահպանման վերահսկում, վերլուծությունների իրականացում,
2) Կազմակերպության ներքին ցանցի խոցելիության թեստերի կազմակերպում (իրականացում) և ցանցի օգտագործողների ակտիվության մոնիթորինգ,
3) տվյալների բազաների հասանելիության մոնիթորինգ,
4) արտակարգ իրավիճակների վերահսկում և վերլուծությունների իրականացում,
5) ավտոմատացված համակարգերի օգտագործողների գրանցման և/կամ հեռացման հաստատում,
6) համակարգչային ցանցերի և ավտոմատացված համակարգերի օգտագործողների գործողությունների և հասանելիությունների վերլուծություն,
7) Կազմակերպության էլեկտրոնային գրանցամատյանների վերլուծություն,
8) նոր ձեռք բերվող կամ մշակվող կիրառական ծրագրերի համար անհրաժեշտ անվտանգության միջոցառումների սահմանում և ներկայացում համապատասխան ստորաբաժանմանը,
9) մասնակցություն նոր ձեռք բերվող կամ մշակվող կիրառական ծրագրերի թեստավորմանը,
10) տեղեկատվության անվտանգության պահանջների վերաբերյալ աշխատակիցների ուսուցում, համապատասխան ձեռնարկների մշակում,
11) Կազմակերպության կողմից սահմանված պարբերականությամբ հաշվետվությունների ներկայացում Կազմակերպության ղեկավարության վերին օղակին:

62. Կազմակերպության կողմից որևէ կերպով դասակարգված էլեկտրոնային տեղեկատվությունը պետք է պահպանվի առնվազն գաղտնագրված եղանակով:

63. Կազմակերպությունում պետք է առկա լինի դասակարգված տեղեկատվության օգտագործողների ցուցակ (արտոնագրված օգտագործողների ցուցակ)՝ համապատասխանեցված Կազմակերպության անվտանգության քաղաքականության հետ: Նշված պահանջը պետք է արտացոլվի Կազմակերպության համապատասխան աշխատակիցների Աշխատատեղի նկարագրում:

64. Կազմակերպության տեղեկատվական համակարգերում շրջանառվող դասակարգված տեղեկատվությունը պետք է արտապատկերվի էլեկտրոնային գրանցամատյաններում:

65. Դասակարգված տեղեկատվության վերաբերյալ էլեկտրոնային գրանցամատյանները հանդիսանում են գաղտնիք պարունակող փաստաթղթեր, որոնք պետք է հասանելի լինեն միայն արտոնագրված օգտագործողներին:

Գլուխ 13. Ցանցային անվտանգություն

66. Կազմակերպության ցանցի կառուցվածքը հաստատվում է Կազմակերպության ղեկավարության վերին օղակի կողմից:

67. Կազմակերպության ցանցերի հետ կապված փաստաթղթերը հանդիսանում են գաղտնի և պետք է հասանելի լինեն միայն արտոնագրված օգտագործողներին:

68. Կազմակերպության ցանցը պետք է կառուցված լինի այնպես, որ ցանցին կամայական արտաքին հարցում անցնի առնվազն մեկ միջցանցային էկրանի միջով:

69. Կազմակերպության համապատասխան աշխատակցի կողմից պետք է մշակվեն և պարբերաբար վերանայվեն ցանցերում տեղեկատվության հոսքի ֆիլտրացման կանոնները:

70. Կազմակերպության ներքին ցանցին միացված համակարգիչները համացանցին կարող են միանալ միայն Կազմակերպության ինտերնետային պրովայդերների միջոցով՝ օգտագործելով միայն Կազմակերպության ներքին տեղեկատվական ցանցը: Արգելվում է Կազմակերպության ներքին ցանցի համակարգիչների ուղիղ միացումը համացանցին, օրինակ՝ տարբեր տեսակի շարժական մոդեմների կիրառմամբ:

71. Կազմակերպության կողմից սահմանված պարբերականությամբ պետք է ուսումնասիրվի ցանցի աշխատունակությունը գերծանրաբեռնված ռեժիմներում:

72. Կազմակերպության կողմից պետք է դիտարկվեն միջցանցային էկրանների համար Կազմակերպության կողմից սահմանված բոլոր նախազգուշական ցուցումները:

73. Կազմակերպության կողմից պետք է բացահայտվեն ներքին ցանցի բոլոր վտանգավոր կետերը, ներքին ցանցին արտաքին ցանկացած միացման հնարավոր տեղերը:

74. Կազմակերպության տարածքային ստորաբաժանումների միջև տեղեկատվական ցանցերով շրջանառվող տեղեկատվությունը պետք է լինի առնվազն ծածկագրված:

Գլուխ 14. Ծրագրային անվտանգություն

75. Մշակող կազմակերպության ստեղծած՝ գլխավոր ադմինիստրատորի գաղտնաբառը ծրագրի վերջնական գործարկումից և ծրագրի ընդունման-հանձնման ակտը ստորագրելուց անմիջապես հետո պետք է փոխվի, իսկ փոխված գաղտնաբառը փակ ծրարի միջոցով պետք է հանձնվի Կազմակերպության գործադիր ղեկավարին, իսկ գլխավոր ադմինիստրատոր օգտագործողի միջոցով ծրագրային համակարգի ադմինիստրատոր օգտագործող ստեղծելուց անմիջապես հետո գլխավոր ադմինիստրատոր օգտագործողը պետք է կասեցվի:

76. Կազմակերպությունում ցանկացած ծրագրային ապահովման ներդրումը պետք է իրականացվի համապատասխան փորձարկումներից հետո: Ընդ որում՝ փորձարկման ժամանակ արգելվում է օգտագործել Կազմակերպության իրական հաճախորդների տվյալները:

77. Կազմակերպության ծրագրային կարգաբերումների կամայական նորացումները և թարմացումները նույնպես պետք է ներդրվեն միայն փորձարկումներից հետո:

78. Արգելվում է կամայական չարտոնված մուտքի հնարավորության առկայությունը:

79. Արգելվում է այլ անձի կողմից օգտագործվող անունով համակարգ մուտք գործելը՝ բացառությամբ արտակարգ իրավիճակներում, միայն Կազմակերպության ղեկավարության վերին օղակի թույլտվության առկայության դեպքում:

80. «Գործառնական օր» ծրագրային համակարգի ինքնուրույն մշակման դեպքում Կազմակերպությունում պետք է առկա լինեն՝

1) մշակված տեխնիկական առաջադրանքը,
2) ծրագրային համակարգի մշակմանը մասնակցած հիմնական և/կամ ժամկետային պայմանագրով աշխատող աշխատակիցների ցուցակը, որտեղ պետք է նշվեն նաև նրանց զբաղեցրած պաշտոնները,
3) ծրագրի մշակման լեզուն և ինտերֆեյսը,
4) ծրագրի վերջնական շահագործվող տարբերակի ծրագրային կոդերը կրող սկավառակների գտնվելու վայրը,
5) ծրագրերի թեստավորման մասնակիցների ցուցակը, մասնակիցների մասնագիտական որակավորումը, Կազմակերպությունում զբաղեցրած պաշտոնը,
6) յուրաքանչյուր թեստավորման արձանագրությունը, թեստավորող խմբի մասնակիցների եզրակացությունը, գործադիր տնօրենի և մասնակիցների ստորագրությունները,
7) ծրագիրն օգտագործող ստորաբաժանումների աշխատակիցների կողմից թեստավորմանը մասնակցելու մասին փաստաթղթերը,

8) ծրագրի վերջնական շահագործվող տարբերակի ծրագրային կոդերի մեջ փոփոխություններ կատարելու հնարավորություններ ունեցող աշխատակիցների ցուցակը,
9) ծրագրի օգտագործողների ուղեցույցը կամ այլ ուղղորդող գրքեր, փաստաթղթեր:

81. «Գործառնական օր» ծրագրային համակարգը որևէ մշակող ընկերությանը պատվիրակելու դեպքում Կազմակերպությունում պետք է առկա լինեն՝

1) ծրագրային համակարգի վերաբերյալ Կազմակերպության և մշակող ընկերության միջև կնքված պայմանագիր,
2) մշակող ընկերությանը ներկայացված տեխնիկական առաջադրանքը և պահանջները,
3) նոր մշակված ծրագրային ապահովման թեստավորման արձանագրությունը և այլ փաստաթղթեր, որոնք պարունակում են թեստավորման արդյունքները, թեստավորող խմբի մասնակիցների եզրակացությունը, ղեկավարության վերին օղակի և մասնակիցների ստորագրությունները,
4) Կազմակերպության և մշակող ընկերության կողմից ստորագրված ընդունման-հանձնման ակտը,
5) մշակող ընկերության տեղեկատվական տեխնոլոգիաների վերաբերյալ հեղինակավոր աուդիտորական կազմակերպության եզրակացությունը,
6) մշակող ընկերության՝ միջազգային ընդունված չափանիշներին համապատասխանությունը հավաստող վկայագիր կամ միջազգային հավաստագրման որևէ կազմակերպության կողմից թողարկված վկայագիր կամ որևէ ապահովագրական ընկերությունում ծրագրային համակարգի ապահովագրված լինելը հավաստող փաստաթուղթ,
7) Կազմակերպության, մշակող ընկերության և էսքրոու (Escrow) ծառայություններ մատուցող երրորդ ընկերության միջև «Գործառնական օր» ծրագրային համակարգի ծրագրային կոդերի պահուստային պահպանման և համապատասխան արտակարգ իրավիճակում Կազմակերպությանը հանձնման վերաբերյալ պայմանագիր:

82. «Գործառնական օր» ծրագրային համակարգի նոր կամ թարմացված տարբերակը ներդրվում է միայն այն դեպքում, երբ այն՝

1) անցել է թեստավորման բոլոր փուլերը, և առկա է թեստավորող հանձնաժողովի դրական եզրակացությունը,
2) ընդունվել է համակարգի պատվիրատուի (օգտագործողի) կողմից՝ ընդունման – հանձնման ակտի ստորագրմամբ:

83. Կազմակերպությունը պետք է ձեռք բերի միայն արտոնագրված ծրագրային համակարգեր:

84. Կազմակերպությունը պետք է կատարի ծրագրային ապահովումների պարբերական թարմացումներ:

85. Կազմակերպության «Գործառնական օր» Ծրագրային համակարգի թեստավորումների հետ կապված փաստաթղթերը հանդիսանում են գաղտնի և պետք է հասանելի լինեն միայն արտոնագրված օգտագործողներին:

Գլուխ 15. Ֆիզիկական անվտանգություն

86. Կազմակերպության Սերվեր հանդիսացող համակարգիչները պետք է պահպանվեն համապատասխան առանձնացված (սերվերային) սենյակներում:

87. Սերվերային սենյակը պետք է համապատասխանի հետևյալ չափանիշներին.

1) լինի առանձնացված հարակից տարածքներից ոչ թափանցիկ նյութերից (օրինակ՝ չլինի ապակուց) պատրաստված պատերով,
2) սերվերային սենյակի դուռը պետք է հանդիսանա միակ ճանապարհը այնտեղ մուտք գործելու կամ դուրս գալու համար,
3) ունենա հակահրդեհային պաշտպանության համակարգ,
4) ունենա շարժման գրանցման/հայտնաբերման համակարգ և/կամ տվիչներ,
5) ունենա համակարգիչների բնականոն աշխատանքն ապահովելու համար անհրաժեշտ ջերմաստիճանը, օդի խոնավությունը կարգավորող և պահպանող համակարգ, ինչպես նաև օդափոխության համակարգ,
6) ունենա տեսահսկման համակարգ, որը պետք է տեղադրված լինի այնպես, որ հնարավորություն լինի հսկելու սերվերային սենյակում տեղի ունեցող ցանկացած իրադարձություն,
7) ունենա դռան ինքնաբերաբար փակման համակարգ,
8) սերվերային սենյակի մուտքի/ելքի գրանցման ընթացակարգ (առնվազն պետք է գրանցվի մուտք/ելք գործողի անուն-ազգանունը, մուտքի/ելքի ժամը և ամսաթիվը),

9) սերվերային սենյակը պետք է ունենա անխափան էլեկտրասնուցման համակարգ, որը պետք է ապահովի ինչպես սերվերների անխափան աշխատանքը, այնպես էլ այս գլխում նշված տեսահսկման, հակահրդեհային պաշտպանության, շարժման գրանցման և հայտնաբերման, ջերմաստիճանը պահպանող, օդափոխության համակարգերի անխափան աշխատանքը առնվազն հիմնական սերվերներից այլ վայրում գտնվող պահուստային սերվերներին անցնելու ժամանակահատվածում,

10) եթե սերվերային սենյակն ունի պատուհան, ապա այն պետք է լինի դրսից ճաղապատ ու միշտ լինի փակ և կարող է բացվել միայն Կազմակերպության ղեկավարության վերին օղակի գրավոր որոշման ու հստակ պատճառաբանության առկայության դեպքում:

88. Կազմակերպության բոլոր տեխնիկական սարքավորումները պետք է հողանցվեն:

89. Կազմակերպության տեխնիկածրագրային սարքավորումները պետք է ունենան նույնականացուցիչներ:

90. Ցանցային միացման կետերը պետք է ֆիզիկապես պաշտպանված լինեն:

Գլուխ 16. Ներքին աուդիտ

91. Եթե Կազմակերպությունն ունի ներքին աուդիտի ստորաբաժանում, ապա դրա կազմում պետք է ներառվի տեղեկատվական տեխնոլոգիաների աուդիտում մասնագիտացված և տեղեկատվական տեխնոլոգիաների աուդիտ իրականացնող աշխատակից:

92. Եթե Կազմակերպությունը չունի ներքին աուդիտի ստորաբաժանում, ապա Կազմակերպությունը պետք է ունենա տեղեկատվական տեխնոլոգիաների աուդիտ իրականացնելու պարտականություններով օժտված աշխատակից:

93. Կազմակերպությունում տեղեկատվական տեխնոլոգիաների աուդիտով զբաղվող ստորաբաժանում կամ աշխատակցի առկայությունը պարտադիր չէ, եթե Կազմակերպությունը տեղեկատվական տեխնոլոգիաների ներքին աուդիտի իրականացումը պատվիրակում է երրորդ անձի:

Գլուխ 17. Պատվիրակում

94. Կազմակերպությունը կարող է մասնակիորեն կամ ամբողջությամբ պատվիրակել տեղեկատվական տեխնոլոգիաների ենթակառուցվածքի աշխատանքները՝ հաշվի առնելով համապատասխան ՀՀ օրենքներով և նորմատիվ իրավական այլ ակտերով սահմանված սահմանափակումները:

ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2013 թվականի հուլիսի 9-ի
թիվ 173-Ն որոշմամբ հաստատված

«Տեղեկատվական անվտանգության ապահովման վերաբերյալ» կարգի

Հավելված 1
Տիպային պարտականությունների անհամադրելիության մատրից

	Ծրագրավորողներ	Օգնության ծառայություն	Տվյալների հենքի ադմինիստրատոր	Ցանցային ադմինիստրատոր	Համակարգերի ադմինիստրատոր
Ծրագրավորողներ			X	X	X
Օգնության ծառայություն					
Տվյալների հենքի ադմինիստրատոր	X			X	X
Ցանցային ադմինիստրատոր	X		X		X
Համակարգերի ադմինիստրատոր	X		X	X	

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի հոկտեմբերի 2-ի թիվ 311-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին**

Նպատակ ունենալով հստակեցնել ապահովագրական գործունեության հիմնական տնտեսական նորմատիվների հաշվարկում ընդգրկվող տարրերը,

հիմք ընդունելով «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 58-րդ հոդվածի 2-րդ մասը, «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետը և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածը և 70-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է .

1. ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2007 թ. հոկտեմբերի 2-ի ««Ապահովագրական գործունեության հիմնական տնտեսական նորմատիվների չափը, ձևավորման և հաշվարկման կարգը, վերաապահովագրողին չարգելված համարելու չափանիշները» կանոնակարգ 3/02-ը հաստատելու մասին» թիվ 311-Ն որոշմամբ հաստատված «Ապահովագրական գործունեության հիմնական տնտեսական նորմատիվների չափը, ձևավորման և հաշվարկման կարգը, վերաապահովագրողին չարգելված համարելու չափանիշները» կանոնակարգ 3/02-ում (այսուհետ՝ Կանոնակարգ 3/02) կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները.

1) Կանոնակարգ 3/02-ի 2-րդ կետը լրացնել 20-րդ ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«20) «փոխկապակցված անձինք» հասկացությունն ունի «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքում կիրառվող նշանակությունը՝ բացառությամբ այն դեպքերի, երբ փոխառուն (անձը) և այլ իրավաբանական անձ փոխկապակցված են միայն այն հիմքով, որ պետությունը, Միջազգային ֆինանսական կորպորացիան, Եվրոպական վերակառուցման և զարգացման բանկը և (կամ) Ասիական զարգացման բանկը տիրապետում է (են) փոխառուի (անձի) և այդ իրավաբանական անձի ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայամասնակցությունների) 20 տոկոսից ավելիին կամ իրավունք ունի (ունեն) օրենքով չարգելված այլ ձևով կանխորոշելու նրանց որոշումները:»:

2) Կանոնակարգ 3/02-ի 17-րդ կետի 9-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«9) սույն կետի 4-րդ ենթակետում նշված կազմակերպություններից տարբեր այլ առևտրային կազմակերպության կանոնադրական կապիտալում կատարված ներդրումների հաշվեկշռային արժեքի և սույն ենթակետի «ա», «բ» և «գ» պարբերություններում նշված մեծությունների տարբերություններից առավելագույնի չափով.

ա. եթե կանոնադրական կապիտալում ներդրումը կազմում է տվյալ անձի կանոնադրական կապիտալի 5 տոկոսը կամ ավելին, կամ

բ. եթե կանոնադրական կապիտալում ներդրումը փոքր է տվյալ անձի կանոնադրական կապիտալի 5 տոկոսից, սակայն գերազանցում է ապահովագրական ընկերության ընդհանուր կապիտալի հաշվեկշռային մեծության 15 տոկոսը, կամ

գ. եթե բոլոր անձանց կանոնադրական կապիտալներում ներդրումները գերազանցում են ապահովագրական ընկերության ընդհանուր կապիտալի հաշվեկշռային մեծության 35 տոկոսը: Ընդ որում, սույն պարբերության պահանջը բավարարող ներդրումները նվազեցվում են հիմնական կապիտալի մեծությունից, եթե այդ ներդրումներն արդեն իսկ չեն նվազեցվել սույն կետի «ա» կամ «բ» պարբերությունների համաձայն:»:

3) Կանոնակարգ 3/02-ի 25-րդ կետը լրացնել նոր 10-րդ ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«10) Եվրոպական վերակառուցման և զարգացման բանկի, Եվրոպական կենտրոնական բանկի, Եվրոպական ներդրումային բանկի, այլ միջազգային կազմակերպությունների (որոնց անդամակցում է Հայաստանի Հանրապետությունը) կողմից թողարկված ոչ պետական պարտատոմսեր՝ ընթացիկ (շուկայական) արժեքով:»:

---

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*

Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2013 թ. հուլիսի 23-ին:

Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 6.08.2013 թ. (ՀՀԳՏ N25 (469)[1], 15.08.2013):

4) Կանոնակարգ 3/02-ի 30-րդ կետի աղյուսակի 3-րդ կետում «կորպորատիվ արժեթղթեր՝ ընթացիկ (շուկայական) արժեքով,» բառերից հետո լրացնել «Եվրոպական վերակառուցման և զարգացման բանկի, Եվրոպական կենտրոնական բանկի, Եվրոպական ներդրումային բանկի, այլ միջազգային կազմակերպությունների (որոնց անդամակցում է Հայաստանի Հանրապետությունը) կողմից թողարկված ոչ պետական պարտատոմսեր՝ ընթացիկ (շուկայական) արժեքով» բառերը:
5) Կանոնակարգ 3/02-ի Հավելված 2-ի Աղյուսակ 1-ի 6-րդ կետն ուժը կորցրած ճանաչել:
6) Կանոնակարգ 3/02-ի Հավելված 2-ի 15-րդ կետի առաջին ենթակետում «ռիսկի կշռով, եթե» բառերից հետո լրացնել «որպես գրավ հանդես է գալիս տվյալ ապահովագրական ընկերությունում պահվող Հայաստանի Հանրապետության դրամը, առաջին խմբի մեջ մտնող արտարժութային միջոցները, ռուբլին, կամ եթե» բառերով:
7) Կանոնակարգ 3/02-ի Հավելված 2-ի 15.1-րդ կետի վերջին պարբերության մեջ «(համաձայն սույն հավելվածի Աղյուսակ 1-ի՝ հաշվի առնելով ռեպո համաձայնագրով վաճառված արժեթղթի արժույթը)» բառերը փոխարինել «(համաձայն սույն հավելվածի Աղյուսակ 1-ի՝ հաշվի առնելով ռեպո համաձայնագրով տրամադրված դրամական միջոցների արժույթը)» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, բացառությամբ սույն որոշման 1-ին կետի 5-րդ և 6-րդ ենթակետերի, որոնք ուժի մեջ են մտնում սույն որոշման ընդունման օրվան հաջորդող վեցերորդ ամսվան հաջորդող ամսվա 1-ին:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
25 հուլիսի 2013 թ., N 176-Ն

«Հաշվետու թողարկողի կանոնադրական կապիտալում մասնակցության ձեռքբերման, ավելացման և նվազման վերաբերյալ տեղեկացման և բացահայտման կարգը» կանոնակարգ 4/15-ը հաստատելու մասին[*]

Հաշվի առնելով, որ հաշվետու թողարկողների կանոնադրական կապիտալում կարող են ձեռք բերվել մասնակցություններ, որոնց արդյունքում բաժնետերը կարող է ազդեցություն գործել թողարկողի գործունեության վրա, ուստի և ազդել ներդրողների որոշումների կայացման վրա,

Նպատակ ունենալով հաշվետու թողարկողների բաժնետերերի վերաբերյալ տեղեկությունների բացահայտման միջոցով ներդրողների որոշումների կայացման համար ապահովել պատշաճ թափանցիկություն,

հիմք ընդունելով «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 154-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը, 156-րդ հոդվածը և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է .

1. Հաստատել «Հաշվետու թողարկողի կանոնադրական կապիտալում մասնակցության ձեռքբերման, ավելացման և նվազման վերաբերյալ տեղեկացման և բացահայտման կարգը» կանոնակարգ 4/15-ը՝ համաձայն Հավելվածի (կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
25 հուլիսի 2013 թ., N 177-Ն

Հավելված

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի
2013 թվականի հուլիսի 23-ի թիվ 177-Ն որոշմամբ

«ՀԱՇՎԵՏՈՒ ԹՈՂԱՐԿՈՂԻ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ, ԱՎԵԼԱՑՄԱՆ ԵՎ ՆՎԱԶՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՑՄԱՆ ԵՎ ԲԱՑԱՀԱՅՏՄԱՆ ԿԱՐԳԸ» ԿԱՆՈՆԱԿԱՐԳ 4/15-Ը

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնակարգը սահմանում է «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 153-րդ հոդվածով նախատեսված բաժնետիրական ընկերությունների (այսուհետ՝ հաշվետու թողարկող) կանոնադրական կապիտալում ցանկացած անձի կողմից «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 154-րդ հոդվածով սահմանված մասնակցությունների ձեռքբերման, ավելացման և նվազման վերաբերյալ հաշվետու թողարկողին և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկին (այսուհետ՝ Կենտրոնական բանկ) տեղեկացման կարգը, ինչպես նաև հաշվետու թողարկողի կողմից այդ տեղեկատվության բացահայտման կարգը:

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2013 թ. հուլիսի 23-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 6.08.2013 թ. (ՀՀԳՏ N25 (469)[1], 15.08.2013):

2. Սույն կանոնակարգում օգտագործված այլ հասկացություններն օգտագործվում են «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում կիրառվող իմաստով:

ԳԼՈՒԽ 2. ՀԱՇՎԵՏՈՒ ԹՈՂԱՐԿՈՂԻ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ, ԱՎԵԼԱՑՄԱՆ ԵՎ ՆՎԱԶՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԹՈՂԱՐԿՈՂԻՆ ԵՎ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻՆ ՏԵՂԵԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

3. Հաշվետու թողարկողի կանոնադրական կապիտալում «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 154-րդ հոդվածով սահմանված մասնակցության ձեռքբերման, ավելացման կամ նվազման դեպքում յուրաքանչյուր անձ (անձամբ կամ փոխկապակցված անձանց միջոցով) այդ մասին տեղեկատվություն է ներկայացնում Կենտրոնական բանկին և հաշվետու թողարկողին՝ համաձայն սույն կանոնակարգի Հավելված 1-ի և Հավելված 2-ի:

4. Սույն կանոնակարգի 3-րդ կետով պահանջվող տեղեկատվությունը Կենտրոնական բանկին և հաշվետու թողարկողին է ներկայացվում առձեռն կամ պատվիրված նամակով՝ տպագիր՝ ստորագրված մասնակցի կամ փոխկապակցված անձանցից մեկի (ֆիզիկական անձի դեպքում) կամ այդ մասնակցի իրավասու անձի (իրավաբանական անձի դեպքում) կողմից: Այն անձինք, որոնք միացված են Սի-Բի-էյ-նեթ համակարգին, կարող են սույն կետով նախատեսված տեղեկատվությունը Կենտրոնական բանկ ներկայացնել էլեկտրոնային տարբերակով՝ էլեկտրոնային-թվային ստորագրությամբ՝ Սի-Բի-էյ-նեթ համակարգի միջոցով, իսկ անհնարինության դեպքում՝ էլեկտրոնային կրիչով:

5. Եթե մասնակիցը կամ փոխկապակցված անձանցից որևէ մեկն արդեն ներկայացրել է սույն կանոնակարգի 3-րդ կետով սահմանված տեղեկատվությունը, ապա մյուս փոխկապակցված անձանց կամ մասնակցի կողմից տվյալ տեղեկատվությունը համարվում է ներկայացված:

ԳԼՈՒԽ 3. ՀԱՇՎԵՏՈՒ ԹՈՂԱՐԿՈՂԻ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ, ԱՎԵԼԱՑՄԱՆ ԵՎ ՆՎԱԶՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՀԱՅՏՄԱՆ ԿԱՐԳԸ

6. Հաշվետու թողարկողը սույն կանոնակարգի 2-րդ գլխի համաձայն ստացված տեղեկատվությունը հրապարակում է որպես էական փաստեր և տեղեկություններ՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի մարտի 11-ի թիվ 68-Ն որոշմամբ հաստատված «Ազդագիր և հաշվետու թողարկողների հաշվետվություններ» կանոնակարգ 4/04-ով սահմանված կարգով: Ընդ որում, սույն կետի համաձայն՝ մասնակցի վերաբերյալ հրապարակվող տեղեկատվությունը ներառում է մասնակցի, նրա հետ փոխկապակցված անձի անունը, ազգանունը, հայրանունը (ֆիզիկական անձանց դեպքում), անվանումը, կազմակերպական-իրավական ձևը (իրավաբանական անձանց դեպքում), մասնակցին և նրա հետ փոխկապակցված անձանց պատկանող հաշվետու թողարկողի բաժնետոմսերի ընդհանուր քանակը և տոկոսային մեծությունը:

7. Հաշվետու թողարկողը սույն կանոնակարգի 2-րդ գլխի համաձայն ստացված տեղեկատվությունը բացահայտում է կարգավորվող շուկայի օպերատորին՝ որպես էական փաստեր և տեղեկություններ կարգավորվող շուկայի օպերատորի կողմից սահմանված կարգով:

ՀԱՎԵԼՎԱԾ 1

«Հաշվետու թողարկողի կանոնադրական կապիտալում մասնակցության ձեռքբերման, ավելացման և նվազման վերաբերյալ տեղեկացման և բացահայտման կարգը» կանոնակարգ 4/15-ի

ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԿԱՄ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՎԵԼԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՑՈՒՄ

_____

(ֆիզիկական անձի համար՝ անունը, ազգանունը, հայրանունը, անձը հաստատող փաստաթղթի նույնականացման համարը և սերիան, բնակության վայրը, կապի միջոցները, իրավաբանական անձի համար՝ անվանումը, ՀՎՀՀ-ն, գրանցման վայրը, կապի միջոցները)

_____

(փոխկապակցված ֆիզիկական անձի համար՝ անունը, ազգանունը, հայրանունը, անձը հաստատող փաստաթղթի նույնականացման համարը և սերիան, բնակության վայրը, կապի միջոցները, փոխկապակցված իրավաբանական անձի համար՝ անվանումը, կազմակերպական-իրավական ձևը, ՀՎՀՀ-ն, գրանցման վայրը, կապի միջոցները (այս տողը լրացվում է փոխկապակցված անձանց միջոցով մասնակցության ձեռքբերման դեպքում))

_____

(հաշվետու թողարկողի անվանումը, ՀՎՀՀ-ն)

Տեղեկություններ մասնակցին և փոխկապակցված անձանց պատկանող արժեթղթերի վերաբերյալ

Բաժնետոմսի տարբերակիչ ծածկագիրը (ISIN)	**Նախքան մասնակցության ձեռքբերումը (ավելացումը) հաշվետու թողարկողի բաժնետոմսեր**				**Մասնակցության ձեռքբերումից (ավելացումից) հետո հաշվետու թողարկողի բաժնետոմսեր**				**Մասնակցության ձեռքբերման (ավելացման) ամսաթիվը (օր/ամիս/տարի)**
	մասնակից		փոխկապակցված անձինք		մասնակից		փոխկապակցված անձինք		
	քանակը	%	քանակը	%	քանակը	%	քանակը	%	

Հավաստիացնում եմ, որ սույն փաստաթղթում պարունակվող տեղեկատվությունը արժանահավատ է և ամբողջական: Գիտակցում եմ, որ որևէ տեղեկատվության կեղծ ներկայացումը հանգեցնում է օրենքով սահմանված պատասխանատվության:

Ստորագրություն _____ Ամսաթիվ _____

(օր/ամիս/տարի)

ՀԱՎԵԼՎԱԾ 2

«Հաշվետու թողարկողի կանոնադրական կապիտալում մասնակցության ձեռքբերման, ավելացման և նվազման վերաբերյալ տեղեկացման և բացահայտման կարգը» կանոնակարգ 4/15-ի

ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՆՎԱԶՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՑՈՒՄ

_____

(ֆիզիկական անձի համար՝ անունը, ազգանունը, հայրանունը, անձը հաստատող փաստաթղթի նույնականացման համարը և սերիան, բնակության վայրը, կապի միջոցները, իրավաբանական անձի համար՝ անվանումը, ՀՎՀՀ-ն, գրանցման վայրը, կապի միջոցները)

_____

(փոխկապակցված ֆիզիկական անձի համար՝ անունը, ազգանունը, հայրանունը, անձը հաստատող փաստաթղթի նույնականացման համարը և սերիան, բնակության վայրը, կապի միջոցները, փոխկապակցված իրավաբանական անձի համար՝ անվանումը, ՀՎՀՀ-ն, գրանցման վայրը, կապի միջոցները (այս տողը լրացվում է փոխկապակցված անձանց միջոցով մասնակցության նվազեցման դեպքում))

_____

(հաշվետու թողարկողի անվանումը, ՀՎՀՀ-ն)

Տեղեկություններ մասնակցին և փոխկապակցված անձանց պատկանող արժեթղթերի վերաբերյալ

Բաժնետոմսի տարբերակիչ ծածկագիրը (ISIN)	**Նախքան մասնակցության նվազեցումը հաշվետու թողարկողի բաժնետոմսեր**				**Մասնակցության նվազեցումից հետո հաշվետու թողարկողի բաժնետոմսեր**				**Մասնակցության նվազեցման ամսաթիվը (օր/ամիս/տարի)**
	մասնակից		փոխկապակցված անձինք		մասնակից		փոխկապակցված անձինք		
	քանակը	%	քանակը	%	քանակը	%	քանակը	%	

Հավաստիացնում եմ, որ սույն փաստաթղթում պարունակվող տեղեկատվությունը արժանահավատ է և ամբողջական: Գիտակցում եմ, որ որևէ տեղեկատվության կեղծ ներկայացումը հանգեցնում է օրենքով սահմանված պատասխանատվության:

Ստորագրություն _____ Ամսաթիվ _____

(օր/ամիս/տարի)

*«Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի վճարահաշվարկային համակարգի կամ տեղեկատվական համակարգերի մասնակիցների կողավորման կառուցվածքը, ինչպես նաև հաճախորդների հաշվեհամարների կառուցվածքը սահմանելու մասին կարգը» հաստատելու և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2002 թվականի դեկտեմբերի 5-ի թիվ 394-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին**[*]

Հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից լիցենզավորվող և վերահսկվող կազմակերպությունների գործունեությունը կարգավորող իրավական ակտերում կատարված փոփոխությունները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից լիցենզավորվող նոր ֆինանսական կազմակերպություններին կոդերի տրամադրման համար նախատեսված միջակայքերի հստակեցման անհրաժեշտությունը, որ հաշվետու թողարկողների կանոնադրական կապիտալում կարող են ձեռք բերվել մասնակցություններ, որոնց արդյունքում բաժնետերը կարող է ազդեցություն գործել թողարկողի գործունեության վրա, ուստի և ազդել ներդրողների որոշումների կայացման վրա,

Նպատակ ունենալով սահմանել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի վճարահաշվարկային համակարգի կամ տեղեկատվական համակարգերի մասնակիցների համար կոդերի տրամադրման նպատակով սահմանված թվերի միջակայքերը, ինչպես նաև սահմանել բանկերի կողմից հաճախորդների համար բացվող դրամական հաշվեհամարների կառուցվածքը,

հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի «բ» և 2-րդ մասի «ե» ենթակետերը և 20-րդ հոդվածի «ե» և «իդ» կետերը, «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետը և 2-րդ մասը, «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածը, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածը և 72-րդ հոդվածի 1-ին մասի «բ» պարբերությունը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը **ո ր ո շ ու մ է .**

1. Հաստատել «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի վճարահաշվարկային կամ տեղեկատվական համակարգերի մասնակիցների կոդավորման կառուցվածքը, ինչպես նաև հաճախորդների հաշվեհամարների կառուցվածքը սահմանելու մասին» կարգը՝ համաձայն Հավելվածի (կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2002 թվականի դեկտեմբերի 5-ի ««Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի վճարահաշվարկային համակարգի մասնակիցների, վերջիններիս հաճախորդների հաշվեհամարների, ինչպես նաև տեղեկատվական համակարգերի մասնակիցների կոդավորման կարգը» հաստատելու մասին» թիվ 394-Ն որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
25 հուլիսի 2013 թ., N 178-Ն

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2013 թ. հուլիսի 23-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 6.08.2013 թ. (ՀՀԳՏ N25 (469)[1], 15.08.2013):

Հավելված

Հաստատված է
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի խորհրդի
2013 թվականի հուլիսի 23-ի թիվ 178-Ն որոշմամբ

ԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՎճԱՐԱՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՄ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԿՈԴԱՎՈՐՄԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՀՃԱԽՈՐԴՆԵՐԻ ԴՐԱՄԱԿԱՆ ՀԱՇՎԵՀԱՄԱՐՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԳԼՈՒԽ 1. ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ

1. Սույն կարգով սահմանվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (այսուհետ՝ Կենտրոնական բանկ) վճարահաշվարկային համակարգի մասնակիցների, Կենտրոնական բանկի համապատասխան տեղեկատվական համակարգերի մասնակիցների միասնական կոդավորման կարգը: Ինչպես նաև սահմանվում է Ֆինանսական կազմակերպության կողմից բացվող դրամական հաշվեհամարների կառուցվածքը:

2. Սույն կարգը չի սահմանում Կենտրոնական բանկի վճարային և տեղեկատվական համակարգերի մասնակցության սկզբունքները, ինչպես նաև «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված հաշվետվություն տրամադրող անձանց հաշվառման գործընթացը:

ԳԼՈՒԽ 2. ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3. Սույն կարգում կիրառվող հիմնական հասկացությունները ունեն հետևյալ իմաստը.

1) ***Բանկ***՝ «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (ՀՕ-68, ընդունված՝ 30.06.1996 թ.) համաձայն լիցենզավորված անձ,
2) ***Բանկերի միություն***՝ Լիցենզավորված բանկերի կողմից ստեղծված միություն,
3) ***Վարկային կազմակերպություն***՝ «Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (ՀՕ-359, ընդունված՝ 29.05.2002 թ.) համաձայն լիցենզավորված անձ,
4) ***Վարկային կազմակերպությունների միություն***՝ Լիցենզավորված Վարկային կազմակերպությունների կողմից ստեղծված միություն,
5) ***Վճարահաշվարկային կազմակերպություն***՝ «Վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (ՀՕ-150, ընդունված՝ 24.11.2004 թ.) համաձայն լիցենզավորված անձ,
6) ***Վճարահաշվարկային կազմակերպությունների միություն***՝ Լիցենզավորված Վճարահաշվարկային կազմակերպությունների կողմից ստեղծված միություն,
7) ***Վարկային բյուրո***՝ «Վարկային տեղեկատվության շրջանառության և վարկային բյուրոների գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (ՀՕ-185, ընդունված՝ 28.10.2008թ.) համաձայն լիցենզավորված անձ,
8) ***Ապահովագրական կամ ապահովագրական միջնորդային գործունեություն իրականացնող ընկերություն (այսուհետ՝ Ապահովագրական ընկերություն)***՝ «Ապահովագրական և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (ՀՕ-177, ընդունված՝ 09.04.2007 թ.) համաձայն լիցենզավորված անձ,
9) ***Ապահովագրական կամ ապահովագրական միջնորդային ընկերությունների միություն***՝ Լիցենզավորված Ապահովագրական ընկերությունների կողմից ստեղծված միություն,
10) ***Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրություն իրականացնող ապահովագրական ընկերությունների բյուրո (այսուհետ՝ Ապահովագրական ընկերությունների բյուրո)***՝ «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (ՀՕ-63, ընդունված՝ 18.05.2010 թ.) համաձայն գրանցված բյուրո,

11) ***Ֆոնդ (Ներդրումային ֆոնդ, այդ թվում՝ Կենսաթոշակային ֆոնդ)***՝«Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (ՀՕ-245, ընդունված՝ 22.12.2010 թ.) համաձայն գրանցված ֆոնդ,
12) ***Ներդրումային ֆոնդի կառավարիչ՝ «***Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (ՀՕ-245, ընդունված՝ 22.12.2010 թ.) համաձայն լիցենզավորված անձ,
13) ***Կենսաթոշակային ֆոնդի կառավարիչ***՝ «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (ՀՕ-244, ընդունված՝ 22.12.2010 թ.) համաձայն լիցենզավորված անձ,
14) ***Կառավարիչ***՝Ներդրումային ֆոնդի կառավարիչ և/կամ Կենսաթոշակային ֆոնդի կառավարիչ,
15) ***Կենսաթոշակային ֆոնդի պահառուի կարգավիճակ, Հաշվի օպերատորի կարգավիճակ***՝հասկացություններն ունեն «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված իմաստը,
16) ***Մասնակիցների ռեեստր վարող***՝հասկացությունն ունի «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված իմաստը,
17) ***Ներդրումային ընկերություն, Կարգավորվող շուկայի օպերատոր, Կենտրոնական դեպոզիտարիա***՝ «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (ՀՕ-195, ընդունված՝ 11.10.2007 թ.) համաձայն լիցենզավորված անձինք,
18) ***Հաշվետու թողարկող***՝ «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (ՀՕ-195, ընդունված՝ 11.10.2007 թ.) համաձայն գրանցված անձ,
19) ***Արժեթղթավորման հիմնադրամ***՝ «Ակտիվների արժեթղթավորման և ակտիվներով ապահովված արժեթղթերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (ՀՕ-96, ընդունված՝ 25.05.2008 թ.) համաձայն գրանցված հիմնադրամ (ֆոնդ),
20) ***Արժեթղթավորման հիմնադրամի կառավարիչ***՝ «ակտիվների արժեթղթավորման և ակտիվներով ապահովված արժեթղթերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (ՀՕ-96, ընդունված՝ 25.05.2008 թ.) համաձայն գրանցված անձ,
21) ***Գրավատուն***՝«Գրավատների և գրավատնային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (ՀՕ-43, ընդունված՝ 03.12.2003 թ.) համաձայն լիցենզավորված անձ,
22) ***Արտարժույթի առուվաճառք իրականացնող անձինք (փոխանակման կետեր), Արտարժույթի դիլերային-բրոքերային առուվաճառք իրականացնող անձինք, Արտարժույթի առուվաճառքի սակարկություններ կազմակերպող անձինք***՝«Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (ՀՕ-135, ընդունված՝ 24.11.2004 թ.) համաձայն լիցենզավորված անձինք,
23) ***Համակարգի այլ մասնակից***՝Կենտրոնական բանկի վճարահաշվարկային և/կամ տեղեկատվական համակարգին անդամակցող անձինք (նաև ֆինանսական կազմակերպություն), որտեղ այդ ֆինանսական կազմակերպությունների համար սույն կարգով կոդերի տրամադրման հատուկ միջակայք սահմանված չէ: Համակարգի այլ մասնակցի կոդը համապատասխան կազմակերպությանը տրամադրվում է Կենտրոնական բանկի նախագահի որոշման հիման վրա: Ընդ որում, Կենտրոնական բանկի իրավական ակտերի համաձայն՝ տվյալ կազմակերպությունը պետք է ունենա համապատասխան իրավասություն անդամակցելու Կենտրոնական բանկի վճարահաշվարկային և/կամ տեղեկատվական համակարգին:
24) ***Այլ հաշվետու կազմակերպություն***՝Կենտրոնական բանկ հաշվետվություն ներկայացնող կազմակերպություն, որը չի հանդիսանում Կենտրոնական բանկի վճարահաշվարկային համակարգի մասնակից:
25) ***Կոդ***՝Գրանցման և Համակարգի մասնակցության կոդը և/կամ Գրանցման և Հաշվետվողականության կոդ:
26) ***Խումբ***՝սույն կարգով սահմանված ֆինանսական կազմակերպություններ, այդ թվում՝ Համակարգի այլ մասնակիցներ կամ հաշվետվություն ներկայացվող կազմակերպություններ, որոնք ընդգրկված են տրամադրվող կոդերի միևնույն խմբում:
27) ***Կառուցվածքային ստորաբաժանում***՝սույն կարգի իմաստով՝ ֆինանսական կազմակերպության գլխամասը (իրավաբանական անձի գտնվելու վայրը) կամ դրա մասնաճյուղը:
28) ***Ներկայացուցչություն***՝ Հայաստանի Հանրապետության իրավական ակտերի համաձայն Կենտրոնական բանկի կողմից հաշվառված ներկայացուցչություն:
29) ***Ֆինանսական կազմակերպություն***՝Հայաստանի Հանրապետության իրավական ակտերի համաձայն Կենտրոնական բանկի կողմից լիցենզավորվող և/կամ վերահսկվող անձ:
30) ***Դրամական հաշիվ***՝ սույն կարգի իմաստով՝ Հայաստանի Հանրապետության իրավական ակտերի համաձայն Հայաստանի Հանրապետության դրամով և ցանկացած արտարժույթով բացված բանկային (ինչպես նաև՝ գանձապետական) հաշիվ:

ԳԼՈՒԽ 3. ԿՈԴԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ

4. Կենտրոնական բանկի վճարահաշվարկային և տեղեկատվական համակարգերի մասնակիցներին Կենտրոնական բանկի կողմից տրամադրվում են վերջիններիս նույնականացնող կոդեր (այսուհետ՝ Գրանցման և Համակարգի մասնակցության կոդ): Ընդ որում.

1) Ֆինանսական կազմակերպությունը և դրա կառուցվածքային ստորաբաժանումը նույնականացվում են Գրանցման և Համակարգի մասնակցության հնգանիշ կոդի միջոցով, որի առաջին երեք նիշերը նույնականացնում են Ֆինանսական կազմակերպությանը, իսկ հաջորդ երկու նիշերը՝ վերջինիս կառուցվածքային ստորաբաժանմանը:
2) Գրանցման և Համակարգի մասնակցության կոդն ունի հետևյալ կառուցվածքը.

X1X2X3X4X5		
Որտեղ՝		
X1X2X3	Ֆինանսական կազմակերպության կոդն է (երեք նիշ երկարությամբ)	Նիշերի առկայությունը պարտադիր է
X4X5	Կազմակերպության կառուցվածքային ստորաբաժանման (կազմակերպության գլխամասը կամ մասնաճյուղը) կոդն է (երկու նիշ երկարությամբ)	Նիշերի առկայությունը պարտադիր է

3) Գրանցման և Համակարգի մասնակցության կոդը թվերի հաջորդականություն է, որի երկարությունը պարտադիր պետք է լինի 5 (հինգ) նիշ:
4) Գրանցման և Համակարգի մասնակցության կոդի կառուցվածքում Կառուցվածքային ստորաբաժանման նույնականացման համար սահմանված կոդը պետք է լինի երկնիշ թիվ, որը նույնականացնում է այդ կազմակերպության գլխամասին կամ մասնաճյուղին: Ընդ որում՝ մասնաճյուղի կոդի տրամադրման թվերն ընկած են 01 (ներառյալ) թվից սկսած մինչև 99-ը (ներառյալ) թվերի միջակայքում և տրամադրվում են ըստ հաջորդականության, իսկ գլխամասային գրասենյակի կոդը հանդիսանում է երկու զրո «00»:
5) Կառուցվածքային ստորաբաժանման երկնիշ թիվը (X4X5-նիշեր) առանց Ֆինանսական կազմակերպության կոդի (X1X2X3-նիշեր) չի կիրառվում:
6) Գրանցման և Համակարգի մասնակցության կոդի կառուցվածքում ֆինանսական կազմակերպության ներկայացուցչության համար կոդ չի տրամադրվում:

5. Գրանցման և Համակարգի մասնակցության կոդը տրամադրվում է.

1) Բանկերին, այդ թվում՝ Կենտրոնական բանկին, Համահայկական բանկին,
2) Վարկային կազմակերպություններին,
3) Ներդրումային ընկերություններին,
4) Կառավարիչներին,
5) Արժեթղթավորման հիմնադրամի կառավարիչներին,
6) Վճարահաշվարկային կազմակերպություններին,
7) Գանձապետարանին,
8) Համակարգի այլ մասնակիցներին,
9) Համակարգի այլ մասնակիցների համար նախատեսված միջակայքից տրամադրվում են նաև Կարգավորվող շուկայի օպերատորի, Կենտրոնական դեպոզիտարիայի, Արտարժույթի առուվաճառքի սակարկություններ կազմակերպող անձանց (Բորսա), Մասնակիցների ռեեստր վարողի կոդերը:

6. Կենտրոնական բանկ հաշվետվությունների ներկայացման նպատակով Կենտրոնական բանկի կողմից Ֆինանսական կազմակերպություններին տրամադրվում են վերջիններիս նույնականացնող կոդեր (այսուհետ՝ Գրանցման և Հաշվետվողականության կոդ): Ընդ որում.

1) Հաշվետու ֆինանսական կազմակերպությունը և դրա կառուցվածքային ստորաբաժանումը նույնականացվում են Գրանցման և Հաշվետվողականության կոդի միջոցով, որի առաջին երկու նիշերը նույնականացնում են Ֆինանսական կազմակերպության խմբին, հաջորդ երեք նիշերը նույնականացնում են տվյալ խմբին պատկանող Ֆինանսական կազմակերպությանը, իսկ վերջին երկու նիշերը՝ վերջինիս համապատասխան ստորաբաժանմանը:

2) Գրանցման և Հաշվետվողականության կոդն ունի հետևյալ կառուցվածքը.

X1X2X3X4X5X6X7		
Որտեղ՝		
X1X2	Միևնույն Ֆինանսական կազմակերպության խումբը (երկու նիշ երկարությամբ)	Նիշերի առկայությունը պարտադիր է
X3X4X5	Տվյալ խմբին պատկանող Ֆինանսական կազմակերպության կոդն է (երեք նիշ երկարությամբ)	Նիշերի առկայությունը պարտադիր է
X6X7	Կազմակերպության կառուցվածքային ստորաբաժանման (գլխամասի, մասնաճյուղի) համար նախատեսված կոդ (երկու նիշ երկարությամբ)	Նիշերի առկայությունը պարտադիր չէ: Այն կիրառվում է եթե Կենտրոնական բանկի իրավական ակտերի համաձայն պահանջվում է նույնականացնել կազմակերպության կառուցվածքային ստորաբաժանումը:

3) Գրանցման և Հաշվետվողականության կոդը թվերի հաջորդականություն է, որի երկարությունը 7 (յոթ) նիշ է, այն բաղկացած է պարտադիր լրացվող՝ X1X2X3X4X5 նիշերից և լրացուցիչ (ոչ պարտադիր լրացվող) X6X7 նիշերից: Սույն կոդի կառուցվածքում կազմակերպության կառուցվածքային ստորաբաժանման (X6X7-նիշերի) համար նախատեսված կոդի կիրառումը պարտադիր չէ, եթե իրավական ակտերի համաձայն չի պահանջվում նույնականացնել (նշել) կազմակերպության կառուցվածքային ստորաբաժանումը: X6X7-նիշերի կառուցվածքը չի վերաբերում Ֆոնդերի կառուցվածքին:
4) Կազմակերպության կառուցվածքային ստորաբաժանման կոդի կիրառման դեպքում հիմնական կոդի և կազմակերպության կառուցվածքային ստորաբաժանման կոդի միջև «-» նշանը կամ որևէ այլ սիմվոլ չի դրվում՝ բացառությամբ այլ իրավական ակտերով սահմանված դեպքերի, երբ թղթային կրիչների վրա կարող է կիրառվել «-» նշանը: Մինչև սույն կարգի ուժի մեջ մտնելը «-» նշանով տրամադրված կոդերը համարվում են տրամադրված առանց «-» նշանի:
5) Գրանցման և Հաշվետվողականության կոդի կառուցվածքում X1-նիշը միշտ պետք է լինի 5 (հինգ) թիվը:
6) Գրանցման և Հաշվետվողականության կոդի կառուցվածքում նշված Ֆինանսական կազմակերպության եռանիշ թիվը (X3X4X5-նիշեր) առանց այդ Ֆինանսական կազմակերպության խումբը բնութագրող երկնիշ թվի (X1X2-նիշեր) չի կիրառվում:
7) Գրանցման և Հաշվետվողականության կոդի կառուցվածքում Կառուցվածքային ստորաբաժանման նույնականացման համար լրացուցիչ սահմանված կոդը երկնիշ թիվ է (ոչ պարտադիր է լրացման համար), որը նույնականացնում է կազմակերպության տվյալ Կառուցվածքային ստորաբաժանմանը: Ընդ որում՝ կազմակերպության մասնաճյուղին կոդի տրամադրման թվերն ընկած են 01 (ներառյալ) թվից սկսած մինչև 99-ը (ներառյալ) թվերի միջակայքում և տրամադրվում է ըստ հաջորդականության, իսկ գլխամասային գրասենյակի կոդը հանդիսանում է երկու զրո՝ «00», որը նույնպես լրացման համար հանդիսանում է ոչ պարտադիր:
8) Գրանցման և Հաշվետվողականության կոդի կառուցվածքում ֆինանսական կազմակերպության ներկայացուցչության համար կոդ չի տրամադրվում:
9) Կենտրոնական բանկի կողմից Ֆոնդերի (կամ Արժեթղթավորման հիմնադրամի) գրանցման դեպքում Գրանցման և Հաշվետվողականության կոդն ունի հետևյալ կառուցվածքը: Ընդ որում՝
   ա. Ֆոնդերի (կամ Արժեթղթավորման հիմնադրամի) գրանցման և հաշվառման համար կիրառվող կոդի կառուցվածքը.

X1X2 X3X4X5 X6X7X8		
Որտեղ՝		
X1X2	Սույն նիշերի համար սահմանված թվերը բնութագրում են Ֆոնդեր (և Արժեթղթավորման հիմնադրամ), որպես ընդհանուր խումբ (երկու նիշ երկարությամբ)	Նիշերի առկայությունը պարտադիր է
X3X4X5	Տվյալ Ֆոնդին (կամ Արժեթղթավորման հիմնադրամին) տրամադրված կոդն է (երեք նիշ երկարությամբ)	Նիշերի առկայությունը պարտադիր է
X6X7X8	Սույն նիշերը բնութագրում են այն անձին (Կառավարչին կամ Արժեթղթավորման հիմնադրամի կառավարչին), որն իրականացնում է տվյալ ֆոնդի կամ Արժեթղթավորման հիմնադրամի կառավարումը (երեք նիշ երկարությամբ) տվյալ պահին	Նիշերի առկայությունը պարտադիր չէ: Այն կիրառվում է, եթե Կենտրոնական բանկի իրավական ակտերի համաձայն պահանջվում է նույնականացնել Կառավարչին կամ Արժեթղթավորման հիմնադրամի կառավարչին:

բ. Ֆոնդերի (կամ Արժեթղթավորման հիմնադրամի) գրանցման և հաշվառման համար կիրառվող Գրանցման և Հաշվետվողականության կոդը բաղկացած է պարտադիր լրացվող՝ X1X2X3X4X5 նիշերից և լրացուցիչ (ոչ պարտադիր լրացվող) X6X7X8 նիշերից, որոնք բնութագրում են տվյալ պահին ֆոնդի (Արժեթղթավորման հիմնադրամի) կառավարում իրականացնող անձին: Սույն կոդի կառուցվածքում լրացուցիչ նիշերը (X6X7X8) կիրառվում են այն դեպքում, երբ իրավական ակտերի համաձայն պահանջվում է նույնականացնել այն անձին, որն իրականացնում է տվյալ ֆոնդի (Արժեթղթավորման հիմնադրամի) կառավարումը: Եթե իրավական ակտերի համաձայն տվյալ ֆոնդի (Արժեթղթավորման հիմնադրամի) կառավարումը կատարվում է Կենտրոնական բանկի կողմից չլիցենզավորված անձի կողմից, ապա X6X7X8-նիշերի կիրառման ժամանակ այդ մասում կարող է դրվել երեք զրո «000»:

գ. Ֆոնդի (Արժեթղթավորման հիմնադրամի) կառավարում իրականացնող անձի փոփոխման դեպքում տվյալ ֆոնդին (Արժեթղթավորման հիմնադրամին) տրամադրված կոդի կառուցվածքում փոփոխվում են միայն X6X7X8-նիշերը, որոնք բնութագրում են տվյալ պահին ֆոնդի (Արժեթղթավորման հիմնադրամի) կառավարում իրականացնող անձին: Ընդ որում, Կառավարչի կամ Արժեթղթավորման հիմնադրամի կառավարչի փոփոխությունը չի ենթադրում Ֆոնդին տրամադրված կոդի փոփոխում և նոր կոդի տրամադրում:

դ. Գրանցման և Հաշվետվողականության կոդի կառուցվածքում ոչ պարտադիր X6X7X8-նիշերը չեն կիրառվում Կառուցվածքային ստորաբաժանման նույնականացման համար:

7. Գրանցման և Հաշվետվողականության կոդը տրամադրվում է.

1) Ապահովագրական կամ ապահովագրական միջնորդային ընկերություններին (բացառությամբ՝ ապահովագրական գործակալների),
2) Ֆոնդերին,
3) Արժեթղթավորման հիմնադրամին,
4) Հաշվետու թողարկողներին,
5) Գրավատներին,
6) Արտարժույթի առուվաճառք իրականացնող անձանց,
7) Այլ հաշվետու կազմակերպություններին,
8) Վարկային բյուրոներին, Ապահովագրական ընկերությունների բյուրոներին, Արտարժույթի դիլերային-բրոքերային առուվաճառք իրականացնող անձանց, որոնց կոդը տրամադրվում է Այլ հաշվետու կազմակերպությունների թվերի միջակայքից:

8. Կենտրոնական բանկի կողմից հաշվառվող Ապահովագրական գործակալներին սույն կարգով սահմանված թվերի միջակայքից կոդ չի տրամադրվում: Ապահովագրական գործակալների հաշվառման համար կարող է կիրառվել սույն կարգով սահմանված սկզբունքներին չհակասող միասնական մոտեցում:

9. Լիցենզավորված ֆինանսական կազմակերպությունների կողմից ստեղծվող՝ Բանկերի միությանը, Վարկային կազմակերպությունների միությանը, Վճարահաշվարկային կազմակերպությունների միությանը, Ապահովագրական կամ ապահովագրական միջնորդային ընկերությունների միությանը Կենտրոնական բանկի կողմից կոդ չի տրամադրվում:

10. Գործող իրավական ակտերով սահմանված՝ Կենսաթոշակային ֆոնդի պահառուի կարգավիճակ ունեցող անձանց, Հաշվի օպերատորի կարգավիճակ ունեցող անձանց սույն կարգով սահմանված սկզբունքների համաձայն կոդ չի տրամադրվում:

11. Ֆինանսական կազմակերպությանը Գրանցման և Համակարգի մասնակցության կոդը կամ Գրանցման և Հաշվետվողականության կոդը տրամադրվում է Կենտրոնական բանկի կողմից՝ իրավասու մարմնի համապատասխան որոշման հիման վրա: Ընդ որում,

1) Եթե ֆինանսական կազմակերպությունը (այդ թվում՝ կառուցվածքային ստորաբաժանումը) լիցենզավորվում կամ գրանցվում է Կենտրոնական բանկի կողմից, ապա սույն կարգով սահմանված համապատասխան կոդը տրամադրվում է տվյալ կազմակերպության լիցենզավորման կամ գրանցման վերաբերյալ ընդունված որոշման հիման վրա:
2) Եթե ֆինանսական կազմակերպությունը չի լիցենզավորվում կամ գրանցվում Կենտրոնական բանկի կողմից, ապա սույն կարգով սահմանված համապատասխան կոդը տրամադրվում է տվյալ կազմակերպությանը կոդ տրամադրելու վերաբերյալ ընդունված որոշման հիման վրա:

12. Եթե ֆինանսական կազմակերպությանը տրամադրված է Գրանցման և Համակարգի մասնակցության կոդ, ապա այդ կազմակերպությանը չի տրամադրվում Գրանցման և Հաշվետվողականության կոդը:

13. Եթե ֆինանսական կազմակերպությանը տրամադրված է Գրանցման և Հաշվետվողականության կոդ, սակայն տվյալ կազմակերպությունը պետք է հանդիսանա Կենտրոնական բանկի վճարահաշվարկա-

յին և տեղեկատվական համակարգի մասնակից, ապա այդ կազմակերպությանը տրամադրվում է Գրանցման և Համակարգի մասնակցության կոդը: Այս դեպքում Կենտրոնական բանկի կողմից տրամադրված Գրանցման և Հաշվետվողականության կոդը անվավեր կարող է ճանաչվել, իսկ կազմակերպության կողմից այն չի կիրառվում:

14. Ֆինանսական կազմակերպությանը տրամադրված Գրանցման և Համակարգի մասնակցության կոդը կիրառման համար առաջնային է (գերակա է) Գրանցման և Հաշվետվողականության կոդի նկատմամբ:

15. Տրամադրվող կոդերը (Գրանցման և Համակարգի մասնակցության կոդը կամ Գրանցման և Հաշվետվողականության կոդ, այսուհետ՝ Կոդ) եզակի են յուրաքանչյուր ֆինանսական կազմակերպության համար, և դրանց միջոցով նույնականացվող անձի (ֆինանսական կազմակերպության) կողմից ենթակա չեն փոփոխման կամ օտարման:

16. Կենտրոնական բանկի կողմից լիցենզավորված ֆինանսական կազմակերպության գործունեության լիցենզիան ուժը կորցրած կամ անվավեր ճանաչվելու կամ Կենտրոնական բանկի վճարահաշվարկային համակարգին մասնակցի անդամակցությունը դադարեցնելու վերաբերյալ իրավասու մարմնի կողմից համապատասխան որոշման ընդունման օրվանից՝ տրամադրված կոդը համարվում է անվավեր:

17. Անվավեր ճանաչված կոդը Կենտրոնական բանկի կողմից կարող է կրկնակի տրամադրվել, եթե վերջինիս անվավեր ճանաչման պահից անցել է 7 տարի:

18. Կենտրոնական բանկի վճարահաշվարկային կամ տեղեկատվական համակարգերում յուրաքանչյուր նոր մասնակից (Ֆինանսական կազմակերպություն) գրանցվում է «Գրանցման և Համակարգում անդամակցության» նպատակով այդ մասնակցի գլխամասային գրասենյակին տրված Գրանցման և Համակարգի մասնակցության հնգանիշ կոդով:

19. Կենտրոնական բանկի վճարահաշվարկային կամ տեղեկատվական համակարգերում Լիցենզավորվող կամ վերահսկվող այլ անձի մասնաճյուղերը չեն գրանցվում, իսկ գլխամասը գրանցվում է սույն կարգով սահմանված սկզբունքով կառուցված Գրանցման և Համակարգի մասնակցության հնգանիշ կոդով:

20. Եթե համակարգում գրանցված մասնակցի համար գրանցվում է նաև մասնաճյուղ, ապա վերջինիս տրամադրվում է մասնակցի մասնաճյուղի հնգանիշ կոդը:

ԳԼՈՒԽ 4. ԿՈԴԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԹՎԱՅԻՆ ՄԻՋԱԿԱՅՔԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ

21. Ֆինանսական կազմակերպություններին տրամադրվող Կոդերի (Գրանցման և Համակարգի մասնակցության կոդը կամ Գրանցման և Հաշվետվողականության կոդ) դասակարգումը համապատասխանում է սահմանված թվային միջակայքերից՝ ֆինանսական կազմակերպությանը տրամադրված համարներին և այդ թվային միջակայքերի դասակարգմանը:

22. Սույն կարգով սահմանված Ֆինանսական կազմակերպություններին՝ Գրանցման և Համակարգի մասնակցության կոդերի ձևավորման և համապատասխան համարների տրամադրման նպատակով սահմանվում են հետևյալ թվային միջակայքերը.

1) Կենտրոնական բանկի, Համահայկական բանկի, բանկերի, օտարերկրյա բանկերի համարները տրամադրվում են 100-ից մինչև 399 (ներառյալ) թվերի միջակայքում: Ընդ որում՝ 103-ից (ներառյալ) մինչև 105 թվերը (ներառյալ) վերապահվում են Կենտրոնական բանկին:
2) Ներդրումային ընկերություններին համարները տրամադրվում են 400-ից (ներառյալ) մինչև 449 (ներառյալ) թվերի միջակայքում, հաջորդաբար՝ 400-ից սկսած:
3) Կառավարիչներին (այդ թվում Արժեթղթավորման հիմնադրամի կառավարիչներին) համարները տրամադրվում են 450-ից (ներառյալ) մինչև 499 (ներառյալ) թվերի միջակայքում, հաջորդաբար՝ 450-ից սկսած:
4) Վարկային կազմակերպությունների համարները տրամադրվում են 600-ից (ներառյալ) մինչև 799 (ներառյալ) թվերի միջակայքում, հաջորդաբար՝ 600-ից սկսած:
5) Վճարահաշվարկային կազմակերպություններին համարները տրամադրվում են 800-ից (ներառյալ) մինչև 859 (ներառյալ) թվերի միջակայքում, հաջորդաբար՝ 800-ից սկսած: Սույն միջակայքում բացառություն են կազմում 801, 805 թվերը, որոնք հանդիսանում են Համակարգի Այլ մասնակիցների կոդեր:
6) Համակարգի այլ մասնակիցներին համարները տրամադրվում են 860-ից (ներառյալ) մինչև 899 (ներառյալ) թվերի միջակայքում, հաջորդաբար՝ 860-ից սկսած: Ինչպես նաև 801, 805 թվերը:
7) Գանձապետական համարները տրամադրվում են 900-ից (ներառյալ) մինչև 929 (ներառյալ) թվերի միջակայքում, հաջորդաբար՝ 900-ից սկսած:
8) 930-ից (ներառյալ) մինչև 999 (ներառյալ) միջակայքում ընկած բոլոր թվերը պահուստային են և գտնվում են Կենտրոնական բանկի տնօրինման տակ և անհրաժեշտության դեպքում կարող են տրամադրվել Կենտրոնական բանկի նախագահի որոշման հիման վրա:

9) Կազմակերպության մասնաճյուղերի քանակը 99-ը գերազանցելու դեպքում Կենտրոնական բանկը այդ կազմակերպության մասնաճյուղերը նույնականացնելու համար կարող է վերջինիս տրամադրել լրացուցիչ համար՝ տվյալ խմբի Կազմակերպությունների համար սահմանված թվերի միջակայքում, սույն կարգի դրույթների պահանջների համաձայն:

23. Գրանցման և Համակարգի մասնակցության կոդերի ձևավորման ժամանակ Ֆինանսական կազմակերպության յուրաքանչյուր խմբի համար սահմանված թվերի միջակայքից համապատասխան կոդ (թիվ) տրամադրելու և նոր կազմակերպություն գրանցելու անհրաժեշտության դեպքում հաջորդաբար կարող են տրամադրվել.

1) տվյալ խմբի կազմակերպությունների համար սահմանված թվերի միջակայքում ընկած այն թվերը, որոնք չեն տրամադրվել որևէ այլ կազմակերպության,
2) անվավեր ճանաչված տվյալ խմբի այն կազմակերպության կոդը, որը բավարարում է սույն կարգի պահանջները:

24. Կենտրոնական բանկի վճարահաշվարկային և/կամ տեղեկատվական համակարգին անդամակցելու համար՝ Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամին, Կենտրոնական դեպոզիտարիային, Կարգավորվող շուկայի օպերատորներին, Մասնակիցների ռեեստր վարողին Գրանցման և Համակարգի մասնակցության կոդերը ձևավորվում և տրամադրվում են Համակարգի այլ մասնակիցների կոդերի միջակայքից:

25. Սույն կարգով սահմանված Ֆինանսական կազմակերպություններին՝ Գրանցման և Հաշվետվողականության կոդերի ձևավորման նպատակով յուրաքանչյուր խմբին պատկանող Ֆինանսական կազմակերպությանը համապատասխան կոդերի տրամադրման համար սահմանվում են հետևյալ թվային միջակայքերը.

1) Հաշվետու թողարկողներին կոդերը տրամադրվում են 50001-ից (ներառյալ) մինչև 50999 (ներառյալ) թվերի միջակայքում, հաջորդաբար՝ 50001-ից սկսած, որտեղ հաշվետու թողարկողներին նույնականացնող կոդը (X1X2-նիշերը) սահմանվում է 50-ը, իսկ կազմակերպությանը նույնականացնող համարը (X3X4X5-նիշերը) տրամադրվում է 001-ից (ներառյալ) մինչև 999 (ներառյալ) թվերի միջակայքում, հաջորդաբար:
2) Ֆոնդերին և Արժեթղթավորման հիմնադրամներին կոդերը տրամադրվում են 51001-ից (ներառյալ) մինչև 51999 (ներառյալ) թվերի միջակայքում, հաջորդաբար՝ 51001-ից սկսած, որտեղ ընդհանրապես Ֆոնդերին և Արժեթղթավորման հիմնադրամներին նույնականացնող կոդը (X1X2-նիշերը) սահմանվում է 51-ը, իսկ որպես գրանցվող ֆոնդի կամ Արժեթղթավորման հիմնադրամի համար (X3X4X5-նիշերը) տրամադրվում են 001-ից (ներառյալ) մինչև 999 (ներառյալ) թվերի միջակայքում, հաջորդաբար: Ֆոնդերին և Արժեթղթավորման հիմնադրամներին տրամադրվող կոդի վերջում (X6X7X8-նիշերը) նշվում է այն Կառավարչի (այդ թվում՝ Արժեթղթավորման հիմնադրամի կառավարչի) կոդը, որը տվյալ պահին իրականացնում է այդ ֆոնդի (Արժեթղթավորման հիմնադրամի) կառավարումը:
3) Այլ հաշվետու կազմակերպություններին (այդ թվում՝ Վարկային բյուրոներին, Ապահովագրական ընկերությունների բյուրոներին, Արտարժույթի դիլերային-բրոքերային առուվաճառք իրականացնող անձանց) կոդերը տրամադրվում են 52001-ից (ներառյալ) մինչև 52100 (ներառյալ) թվերի միջակայքում, հաջորդաբար՝ 52001-ից սկսած, որտեղ Այլ հաշվետու կազմակերպություններին նույնականացնող կոդը (X1X2-նիշերը) սահմանվում է 52-ը, իսկ կազմակերպությանը նույնականացնող համարը (X3X4X5-նիշերը) տրամադրվում է 001-ից (ներառյալ) մինչև 100 (ներառյալ) թվերի միջակայքում, հաջորդաբար:
4) Ապահովագրական կամ ապահովագրական միջնորդային գործունեություն իրականացնող ընկերություններին (այդ թվում՝ Կյանքի ապահովագրություն իրականացնող ընկերություն, Ոչ կյանքի ապահովագրություն իրականացնող ընկերություն, Վերաապահովագրություն իրականացնող ընկերություն, ապահովագրական բրոքեր, բացառությամբ՝ ապահովագրական գործակալների) կոդերը տրամադրվում են 53001-ից (ներառյալ) մինչև 53999 (ներառյալ) թվերի միջակայքում, հաջորդաբար՝ 53001-ից սկսած: Որտեղ Ապահովագրական կամ ապահովագրական միջնորդային գործունեություն իրականացնող ընկերություններին նույնականացնող կոդը (X1X2-նիշերը) սահմանվում է 53-ը, իսկ կազմակերպությանը նույնականացնող համարը (X3X4X5-նիշերը) տրամադրվում է 001-ից (ներառյալ) մինչև 999 (ներառյալ) թվերի միջակայքում, հաջորդաբար:
5) Արտարժույթի առուվաճառք իրականացնող անձանց (փոխանակման կետ) կոդերը տրամադրվում են 54001-ից (ներառյալ) մինչև 54999 (ներառյալ) թվերի միջակայքում, հաջորդաբար՝ 54001-ից սկսած: Որտեղ Արտարժույթի առուվաճառք իրականացնող անձին նույնականացնող կոդը (X1X2-

նիշերը) սահմանվում է 54-ը, իսկ կազմակերպությանը նույնականացնող համարը (X3X4X5-նիշերը) տրամադրվում է 001-ից (ներառյալ) մինչև 999 (ներառյալ) թվերի միջակայքում, հաջորդաբար:

6) Գրավատներին կոդերը տրամադրվում են 55001-ից (ներառյալ) մինչև 55999 (ներառյալ) թվերի միջակայքում, հաջորդաբար՝ 55001-ից սկսած: Որտեղ Գրավատներին նույնականացնող կոդը (X1X2-նիշերը) սահմանվում է 55-ը, իսկ կազմակերպությանը նույնականացնող համարը (X3X4X5-նիշերը) տրամադրվում է 001-ից (ներառյալ) մինչև 999 (ներառյալ) թվերի միջակայքում, հաջորդաբար:
7) 56000 (ներառյալ) մինչև 59999 (ներառյալ) թվերի միջակայքերը պահուստային են, և գտնվում են Կենտրոնական բանկի տնօրինման տակ, և անհրաժեշտության դեպքում կարող են տրամադրվել Կենտրոնական բանկի նախագահի որոշման հիման վրա:

26. Սույն գլխով սահմանված կոդերի միջակայքերը ամփոփ ներկայացված են սույն կարգի անբաժանելի մասը կազմող Հավելված 2-ում, որը կրում է ուղեցուցային բնույթ (տես կից՝ .xls ֆայլը):

27. Գրանցման և Համակարգի մասնակցության կոդերի համար թվային միջակայքերի դասակարգման օրինակներ.

1) բանկային համարներն են (օրինակ՝ 103, 106-ից, 244, 247՝ մինչև 399 (ներառյալ)).
   ա. եթե բանկի համարը 247 է, ապա բանկի գլխամասային գրասենյակի կոդը կլինի 24700,
   բ. բանկի մասնաճյուղի համարներն են (օրինակ՝ 01, 02, 03՝ մինչև 99 (ներառյալ)),
   գ. եթե բանկի համարը 247 է, ապա բանկի մասնաճյուղի կոդը կլինի 24701, 24702 և այլն.
2) վարկային կազմակերպությունների համարներն են (օրինակ՝ 600, 601, 602՝ մինչև 799 (ներառյալ)).
   ա. եթե վարկային կազմակերպության համարը 605 է, ապա վարկային կազմակերպության գլխամասային գրասենյակի կոդը կլինի 60500,
   բ. վարկային կազմակերպությունների մասնաճյուղերի համարներն են (օրինակ՝ 01, 02, 03՝ մինչև 99 (ներառյալ)),
   գ. եթե վարկային կազմակերպության համարը 602 է, ապա վերջինիս մասնաճյուղի կոդը կլինի 60201, 60202 և այլն.
3) Համակարգի այլ մասնակցի համար նախատեսված համարներն են (օրինակ՝ 860, 861, 862՝ մինչև 899 (ներառյալ)).
   ա. Համակարգի այլ մասնակիցների մասնաճյուղերի համարներն են (օրինակ՝ 01, 02, 03՝ մինչև 99 (ներառյալ)).
   բ. եթե Համակարգի այլ մասնակցի համարը 860 է, ապա վերջինիս գլխամասային գրասենյակի կոդը կլինի 86000.
4) Հայաստանի Հանրապետության գանձապետական համարներն են (օրինակ՝ 900, 901, 902՝ մինչև 929 (ներառյալ)).
   ա. Հայաստանի Հանրապետության գանձապետական կառուցվածքային ստորաբաժանումների համարներն են (օրինակ՝ 01, 02, 03 մինչև 99 (ներառյալ)):
5) Եթե կազմակերպությունը (որի համարն է օրինակ 106), արդեն ունի 99 մասնաճյուղեր (այսինքն՝ կազմակերպության մասնաճյուղերին տրամադրվել են 10601-ից մինչև 10699 բոլոր կոդերը), ապա 100-րդ, 101-րդ և հետագայում հաշվառվող մասնաճյուղերի գրանցման համար այդ կազմակերպությանը տրամադրվում է նոր եռանիշ համար (օրինակ՝ նոր համարն է 107): Այս կազմակերպության 100-րդ, 101-րդ մասնաճյուղերի և հետագայում հաշվառվող մասնաճյուղերի կոդերը կձևավորվեն նոր եռանիշ համարի (107-ի) միջոցով (օրինակ՝ 100-րդ, 101-րդ մասնաճյուղերին համապատասխանաբար կտրամադրվեն 10701, 10702 կոդերը):

ԳԼՈՒԽ 5. ԴՐԱՄԱԿԱՆ ՀԱՇՎԵՀԱՄԱՐՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ

28. Հայաստանի Հանրապետության իրավական ակտերի համաձայն հաճախորդների սպասարկման նպատակով Դրամական հաշիվներ բացելու, վարելու իրավասություն ունեցող Ֆինանսական կազմակերպության (Կենտրոնական բանկ, Համահայկական բանկ, առևտրային բանկ), այդ թվում՝ Գանձապետարանի կողմից բացվող դրամական հաշիվների համարների (այսուհետ՝ Հաշվեհամար) կառուցվածքը կարգավորվում է սույն կարգով սահմանված ընթացակարգով: Ընդ որում, Ֆինանսական կազմակերպության կողմից միջբանկային (ներբանկային) փոխանցման հանձնարարականներում կիրառվող միջանկյալ դրամական հաշիվների կառուցվածքը նույնպես կարգավորվում է սույն կարգով:

29. Հաշվեհամարն ունի հետևյալ կառուցվածքը.

1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	-	13	14	15	16
ա			բ		գ						դ			ե		
զ																

Որտեղ՝

ա - Ֆինանսական կազմակերպության համարը (3 նիշ)

բ - Կառուցվածքային ստորաբաժանման (գլխամասային գրասենյակը կամ դրա մասնաճյուղը) համարը (2 նիշ)

գ - Հաճախորդին նույնականացնող նիշեր (6 նիշ)

դ - Ստուգիչ նիշը (1 նիշ)

ե - Ոչ պարտադիր նիշեր (մինչև 4 նիշ)

զ (ա, բ կոդերը միասին) - Տվյալ ֆինանսական կազմակերպությանը և կառուցվածքային ստորաբաժանմանը (ֆինանսական կազմակերպության գլխամասը կամ դրա մասնաճյուղը) նույնականացնող կոդ (5 նիշ)

30. Հաշվեհամարը թվերի հաջորդականություն է, որի երկարությունը 16 (տասնվեց) նիշ է, և կազմված է 12 (տասներկու) պարտադիր և լրացուցիչ՝ մինչև 4 (չորս) ոչ պարտադիր լրացվող նիշերից: Ընդ որում.

1) Հաշվեհամարի կառուցվածքում պարտադիր լրացվող 12 (տասներկու) նիշերը կազմված են հետևյալ բաղադրիչ մասերից՝
   ա. Ֆինանսական կազմակերպության կառուցվածքային ստորաբաժանման կոդն է (5 նիշ), որտեղ առաջին 3 նիշը Ֆինանսական կազմակերպության համարն է, իսկ հաջորդ 2 նիշը կառուցվածքային ստորաբաժանման համարն է (գլխամասային գրասենյակը կամ դրա մասնաճյուղը),
   բ. հաճախորդին նույնականացնող նիշեր (6 նիշ), որոնք լրացվում են Ֆինանսական կազմակերպության կառուցվածքային ստորաբաժանման կոդից հետո,
   գ. ստուգիչ նիշը (1 նիշ), որը հանդիսանում է վերջին պարտադիր նիշը:
2) Մինչև 4 (չորս) ոչ պարտադիր նիշերը ֆինանսական կազմակերպության կողմից օգտագործվում են ըստ անհրաժեշտության՝ իրենց հայեցողությամբ:
3) Հաշվեհամարի կառուցվածքում ֆինանսական կազմակերպության կառուցվածքային ստորաբաժանման համար նախատեսված 2 (երկու) նիշը նույնականացնում է տվյալ ֆինանսական կազմակերպությունում հաճախորդի հաշիվը սպասարկող կառուցվածքային ստորաբաժանմանը:
4) Ֆինանսական կազմակերպությունն իրավական ակտերի համաձայն իրենց հաճախորդների համար հաշիվներ բացելիս ապահովում են բացվող հաշվեհամարների համապատասխանությունը սույն կարգով սահմանված սկզբունքին:

31. Յուրաքանչյուր Ֆինանսական կազմակերպություն ինքն է սահմանում հաշվեհամարում իր հաճախորդների նույնականացման համար (ինչպես նաև կիրառվող միջանկյալ հաշվեհամարում) առանձնացված 6 (վեց) նիշերի կառուցվածքը, ինչպես նաև ոչ պարտադիր՝ մինչև 4 (չորս) նիշերի քանակը և կառուցվածքը:

32. Ստուգիչ նիշը ձևավորվում և ստուգվում է սույն կարգով սահմանված ալգորիթմների (Ստուգիչ նիշի ձևավորման ալգորիթմ, ինչպես նաև Ստուգիչ նիշի ստուգման ալգորիթմ) համաձայն, որոնցից պարտադիր օգտվում են բոլոր Ֆինանսական կազմակերպությունները՝ իրենց հաճախորդներին հաշիվներ բացելու ժամանակ: Հաշվեհամարի կառուցվածքում ստուգիչ նիշը հաշվարկելու համար կիրառվում են միայն հաշվեհամարի առաջին 11 պարտադիր նիշերը:

33. Հաշվեհամարում ոչ պարտադիր նիշերի առկայության դեպքում, այդ ոչ պարտադիր նիշերը չեն օգտագործվում հաշվեհամարի ստուգիչ նիշի հաշվարկման համար և լրացվում են ստուգիչ նիշից հետո:

34. Թղթային կրիչների վրա հաշվեհամարի դուրս բերման ժամանակ, լրացուցիչ նիշերի առկայության դեպքում, վերջիններս հիմնական հաշվեհամարից կարող են տարանջատվել կիրառելով «-» նշանը: էլեկտրոնային վճարումների դեպքում «-» նիշը չի օգտագործվում (չի մուտքագրվում և չի փոխանցվում):

35. Հաշվեհամարի ձևավորման օրինակներ.

1) Հաշվեհամարն ունի հետևյալ տեսքը՝ **127027482877**

Որտեղ՝

*Ֆինանսական կազմակերպություն -**127***

*Կառուցվածքային ստորաբաժանում -**02***

*Հաճախորդի հաշիվ- **748287***

*Ստուգիչ նիշ-**7***

2) Հաշվեհամարն ունի հետևյալ տեսքը՝ **220185546730-21**

Որտեղ՝

*Ֆինանսական կազմակերպություն -**220***

*Կառուցվածքային ստորաբաժանում -**18***

*Հաճախորդի հաշիվ-**554673***

*Ստուգիչ նիշ-**0***

*Ոչ պարտադիր նիշեր -**21***

ա. Թղթային կրիչի վրա հաշվեհամարի դուրսբերման ժամանակ, այդ հաշվեհամարը կունենա հետևյալ տեսքը՝ **220185546730-21,**

բ. էլեկտրոնային վճարումների դեպքում հաղորդագրություններում նշվող հաշվեհամարը կունենա հետևյալ տեսքը՝ **22018554673021:**

ԳԼՈՒԽ 6. ՍՏՈՒԳԻՉ ՆԻՇԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԱԼԳՈՐԻԹՄԸ

36. Հաշվեհամարի կառուցվածքում ստուգիչ նիշի հաշվարկման ժամանակ իրականացվում են հետևյալ հաջորդական քայլերը.

1) հաշվեհամարի առաջին 11 նիշից յուրաքանչյուրը բազմապատկվում է իրեն համապատասխանող կշռային գործակցով (2 և 1 թվերով),
2) Բազմապատկման արդյունքները գումարվում են: Ընդ որում՝ յուրաքանչյուր նիշ գումարվում է որպես առանձին թիվ,
3) Ստուգիչ նիշը ստանալու համար գումարման արդյունքում ստացված թվին հաջորդող և առանց մնացորդի 10-ի բաժանվող թվից հանվում է վերոհիշյալ գումարման արդյունքը: Ստուգիչ նիշը կարող է լինել 0-ից 9-ը ցանկացած թիվ: Եթե բազմապատկման արդյունքների գումարման ժամանակ ստացվում է առանց մնացորդի 10-ի բաժանվող թիվ, ապա ստուգիչ նիշը հավասար կլինի 0-ի:

37. Հաշվեհամարի ստուգիչ նիշը հաշվարկելու օրինակներ.

1) Օրինակ 1. **12702748287K**

1	2	7	0	2	7	4	8	2	8	7	K	*Կողը*
x	x	x	x	x	x	x	x	x	x	x		*(բազմապատկում)*
2	1	2	1	2	1	2	1	2	1	2		*կշռային գործակիցներ*
2	2	14	0	4	7	8	8	4	8	14		*բազմապատկման արդյունքները*

Որտեղ՝

2+2+1+4+0+4+7+8+8+4+8+1+4=53

K=60-53=7

Մեր հաշվեհամարը կլինի՝ **127027482877**

2) Օրինակ 2. **22018554673K**

2	2	0	1	8	5	5	4	6	7	3	K	*Կողը*
x	x	x	x	x	x	x	x	x	x	x		*(բազմապատկում)*
2	1	2	1	2	1	2	1	2	1	2		*կշռային գործակիցներ*
4	2	0	1	16	5	10	4	12	7	6		*բազմապատկման արդյունքները*

Որտեղ՝

4+2+0+1+1+6+5+1+0+4+1+2+7+6=40

Քանի որ գումարման արդյունքում ստացված թիվը (40) վերջանում է 0-ով, ապա ստուգիչ նիշը հավասար կլինի 0-ի:

Մեր հաշվեհամարը կլինի՝ **220185546730**

38. Հաշվեհամարում ստուգիչ նիշի ձևավորման ալգորիթմի հուսալիության մաթեմատիկական հիմնավորումը սահմանված է սույն կարգի Հավելված 1-ով:

ԳԼՈՒԽ 7. ՍՏՈՒԳԻՉ ՆԻՇԻ ՍՏՈՒԳՄԱՆ ԱԼԳՈՐԻԹՄԸ

39. Հաշվեհամարում ստուգիչ նիշի ստուգումը իրականացվում է հետևյալ հաջորդական քայլերի միջոցով.

1) հաշվեհամարի առաջին 12 նիշերը (ներառյալ՝ ստուգիչ նիշը) բազմապատկվում են իրենց համապատասխանող կշռային գործակցով (2 և 1 թվերով),
2) բազմապատկման արդյունքները գումարվում են: Ընդ որում՝ յուրաքանչյուր նիշ գումարվում է որպես առանձին թիվ,
3) եթե ստացված արդյունքն առանց մնացորդի բաժանվում է 10-ի, ապա ստուգիչ նիշը ճիշտ է հաշվարկված:

40. Հաշվարկված ստուգիչ նիշի ստուգման ալգորիթմի օրինակ.

1) Օրինակ՝ Մեր հաշվեհամարն է՝ **127027482877**: Որտեղ՝

1	2	7	0	2	7	4	8	2	8	7	7
x	x	x	x	x	x	x	x	x	x	x	X
2	1	2	1	2	1	2	1	2	1	2	1
2	2	14	0	4	7	8	8	4	8	14	7

Որտեղ՝

2+2+1+4+0+4+7+8+8+4+8+1+4+7=60

Քանի որ գումարը (60) առանց մնացորդի բաժանվում է 10-ի, ուրեմն ստուգիչ նիշը ճիշտ է հաշվարկված:

ԳԼՈՒԽ 8. ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

41. Սույն կարգով սահմանված այն կազմակերպություններին և նրանց կառուցվածքային ստորաբաժանումներին, որոնց մինչև սույն կարգի ուժի մեջ մտնելը Կենտրոնական բանկի կողմից տրամադրվել է Գրանցման և Հաշվետվողականության կոդը «-» նշանի կիրառմամբ, ապա սույն կարգն ուժի մեջ մտնելուց հետո էլեկտրոնային կրիչներում և տեղեկատվական համակարգերում «-» նշանը չի օգտագործվում: Գրանցման և Հաշվետվողականության կոդի կառուցվածքում «-» նշանի բացառումը չի դիտարկվում որպես նոր կոդի տրամադրում:

42. Սույն կարգն ուժի մեջ մտնելուց հետո այն կազմակերպությունների խմբերին, որոնց համար Գրանցման և Հաշվետվողականության կոդ տրամադրելու նպատակով սահմանվել են համապատասխան միջակայքեր, Կենտրոնական բանկի նախագահի որոշման հիման վրա վեցամսյա ժամկետում տրամադրվում է Գրանցման և Հաշվետվողականության կոդ, եթե այդ կազմակերպությունը և (կամ) կառուցվածքային ստորաբաժանումը գրանցվել (հաշվառվել) է մինչև սույն կարգի ուժի մեջ մտնելը և կոդ չի ստացել այդ նպատակով համապատասխան միջակայք սահմանված չլինելու պատճառով:

Հավելված 1

«Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի վճարահաշվարկային կամ տեղեկատվական համակարգերի մասնակիցների կողավորման կառուցվածքը, ինչպես նաև հաճախորդների հաշվեհամարների կառուցվածքը սահմանելու մասին» կարգի

ԱԼԳՈՐԻԹՄԻ ՀՈՒՍԱԼԻՈՒԹՅԱՆ ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

1. Դիցուք ունենք հետևյալ հաշվեհամարը՝

$X_1 \ldots X_i \ldots X_{11}K$, որտեղ $1 \le i \le 11$

X_1 ...	X_i ...	X_{11}	K
2	c	2	1
$2X_1$	cX_i	$2X_{11}$	K

որտեղ՝ c =1 կամ 2:

Առանց ընդհանրության սահմանափակման դիտարկենք հետևյալ դեպքերը՝

1) Եթե հաշվեհամարը ճիշտ է և c =1, կարող ենք գրել հետևյալ հավասարումը՝ ելնելով ստուգիչ նիշի հաշվարկման ալգորիթմից.

$X_i + P + K = 10n$, *որտեղ՝*

n>0

P - հաշվեհամարի նիշերի (բացի X_i) և նրանց համապատասխանող կշռային գործակիցների արտադրյալների նիշերի գումարն է:

K - ստուգիչ նիշ:

Ենթադրենք, որ հաշվեհամարում մեկ նիշ սխալ է գրված (X_i-ի փոխարեն գրվել է X_i') և սխալը չի հայտնաբերվում (ստուգիչ նիշը մնում է անփոփոխ): Այս դեպքում կունենանք հետևյալ հավասարումը.

$X_i' + P + K = 10m$, *որտեղ՝*

m>0

X_i' - հաշվեհամարի մեջ սխալ մուտքագրված նիշի (X_i') և նրան համապատասխանող կշռային գործակցի (c) արտադրյալն է:

P - հաշվեհամարի նիշերի (բացի X_i') և նրանց համապատասխանող կշռային գործակիցների արտադրյալների նիշերի գումարն է:

K - ստուգիչ նիշ:

Որպեսզի հաշվեհամարում տեղ գտած սխալը չհայտնաբերվի (այսինքն՝ ստուգիչ նիշը մնա անփոփոխ), ստորև բերված հավասարումների համակարգը պետք է ունենա լուծում.

$X_i + P + K = 10n$

$X_i' + P + K = 10m$, *որտեղ՝ $n, m>0$; $0 \le X_i, X_i' \le 9$:*

Առանց ընդհանրության սահմանափակման՝ հանելով առաջին հավասարումից երկրորդը, կունենանք՝

$(X_i - X_i')=10(n-m)$,

Քանի որ 0 (X_i ,$X`_i$ ( 9, ապա կարող ենք ասել, որ 0 ( $X_i$ -$X`_i$ (9:

Այսպիսով, հավասարումը տեղի ունենալ չի կարող, հետևաբար մեկ նիշ սխալ գրելու դեպքում (երբ c=1) սխալը միարժեքորեն բացահայտվում է:

2) Եթե հաշվեհամարը ճիշտ է և c =2, ապա նշանակելով $2X_i=10a_1 +a_2$ կարող ենք գրել 0 հետևյալ հավասարումը (ելնելով ստուգիչ նիշի հաշվարկման ալգորիթմից).

$a_1 +a_2+P+K=10n$, որտեղ՝

n>0

a_1 և a_2 - հաշվեհամարի մեջ մուտքագրված նիշի (X_i) և նրան համապատասխանող կշռային գործակցի (c) արտադրյալի նիշերն են,

P - հաշվեհամարի նիշերի (բացի X_i) և նրանց համապատասխանող կշռային գործակիցների արտադրյալների նիշերի գումարն է,

K - ստուգիչ նիշ:

Ենթադրենք, որ հաշվեհամարում մեկ նիշ սխալ է գրված (X_i-ի փոխարեն գրվել է X_i'), և սխալը չի հայտնաբերվում (ստուգիչ նիշը մնում է անփոփոխ): Այս դեպքում (նշանակելով $2X_i'=10b_1+b_2$) կունենանք հետևյալ հավասարումը.

$b_1+b_2 +P+K =10m$, որտեղ՝

m>0

b_1 և b_2 - հաշվեհամարի մեջ սխալ մուտքագրված նիշի ($X`_i$) և նրան համապատասխանող կշռային գործակցի (c) արտադրյալի նիշերն են,

P - հաշվեհամարի նիշերի (բացի X_i') և նրանց համապատասխանող կշռային գործակիցների արտադրյալների նիշերի գումարն է,

K - ստուգիչ նիշ:

Ելնելով ստուգիչ նիշի հաշվարկման ալգորիթմից՝ կարող ենք գրել հետևյալ հավասարումների համակարգը՝

$a_1 +a_2 +P+K=10n$

$b_1+b_2 +P+K =10m$

Որպեսզի հաշվեհամարում տեղ գտած սխալը չհայտնաբերվի (այսինքն՝ ստուգիչ նիշը մնա անփոփոխ), վերոհիշյալ հավասարումների համակարգը պետք է ունենա լուծում:

Առանց սահմանափակելու ընդհանրությունը, հանելով հավասարումները միմյանցից կունենանք՝

$(a_1 +a_2) - (b_1 + b_2)=10 (n-m)$, *որտեղ՝*

a_1, b_1, a_2 և b_2-ի արժեքները փոփոխվում են՝ համաձայն ստորև բերված աղյուսակների.

a_1	a_2
0	0; 2; 4; 6; 8
1	0; 2; 4; 6; 8

b_1	b_2
0	0; 2; 4; 6; 8
1	0; 2; 4; 6; 8

Աղյուսակից երևում է, որ տվյալ հավասարման ձախ մասն առավելագույնը կարող է հավասար լինել 9-ի (a_1=1; a_2=8; b_1=0; b_2=0): Այսպիսով, հավասարումը տեղի ունենալ չի կարող, հետևաբար մեկ նիշ սխալ գրելու դեպքում սխալը միարժեքորեն բացահայտվում է:

2. Դիցուք ունենք հետևյալ հաշվեհամարը՝

X_1 …X_i X_{i+1} ….X_{11}K, որտեղ 1(i (11

X_1 …	X_i	X_{i+1}…	X_{11}	K
2	c	d	2	1
$2X_1$	cX_i	dX_{i+1}	2_{X11}	K

որտեղ՝ c=1, d=2 կամ c=2, d=1:

Առանց ընդհանրության սահմանափակման դիտարկենք դեպք, երբ c=2, d=1:

Եթե հաշվեհամարը ճիշտ է, կարող ենք գրել հետևյալ հավասարումը (նշանակելով $2X_i=10a_1 + a_2$)՝ ելնելով ստուգիչ նիշի հաշվարկման ալգորիթմից.

$a_1 + a_2 + X_{i+1}+P+K=10n$, որտեղ՝

n>0

a_1 և a_2 - հաշվեհամարի մեջ մուտքագրված նիշի (X_i) և նրան համապատասխանող կշռային գործակցի (c) արտադրյալի նիշերն են,

P - հաշվեհամարի նիշերի (բացի X_i) և նրանց համապատասխանող կշռային գործակիցների արտադրյալների նիշերի գումարն է,

K - ստուգիչ նիշ:

Ենթադրենք, որ հաշվեհամարը սխալ է գրվել՝ իրար հաջորդող երկու նիշ (X_i և X_{i+1}) տեղերով փոխվել են, և սխալը չի հայտնաբերվել (ստուգիչ նիշը մնացել է անփոփոխ): Այս դեպքում (նշանակելով $2X_{i+1}=10b_1+b_2$) կունենանք հետևյալ հավասարումը՝

$b_1 + b_2 + X_1+P+K=10m,$ որտեղ՝

m>0

b_1 և b_2 - հաշվեհամարի մեջ սխալ մուտքագրված նիշի (X_{i+1}) և նրան համապատասխանող կշռային գործակցի (c) արտադրյալի նիշերն են,

P - հաշվեհամարի նիշերի (բացի X_{i+1}) և նրանց համապատասխանող կշռային գործակիցների արտադրյալների նիշերի գումարն է,

K - ստուգիչ նիշ:

Լուծենք հավասարումների հետևյալ համակարգը.

$a_1 + a_2 + X_{i+1} +P+K=10n$

$b_1+ b_2 + X_i+P+K=10m$, որտեղ՝

0 = X_i, X_{i+1} = 9, իսկ a_1, b_1, a_2 և b_2-ի արժեքները փոփոխվում են՝ համաձայն ստորև բերված աղյուսակների.

a_1	a_2
0	0; 2; 4; 6; 8
1	0; 2; 4; 6; 8

b_1	b_2
0	0; 2; 4; 6; 8
1	0; 2; 4; 6; 8

Առանց ընդհանրության սահմանափակման կարող ենք գրել.

$a_1 + a_2 + X_{i+1}+P+K= b_1 + b_2+ X_i+P+K +10(n-m),$

X_i և X_{i+1} -ի փոխարեն տեղադրելով համապատասխան արժեքները
($X_i=(10a_1+a_2)/2$ $X_{i+1}=(10b_1+b_2)/2$) և կատարելով ձևափոխումներ՝ արդյունքում կունենանք.

$(8b_1-b_2) - (8a_1- a_2)=20 (n-m)$

Ելնելով սույն աղյուսակի տվյալներից՝ մաքսիմալ արժեքը, որը կարող է ընդունել հավասարման ձախ մասը, հավասար է 16-ի (b_1=1, b_2=0, a_1=0, a_2=8), այսինքն՝ հավասարումը տեղի ունենալ չի կարող:

Այսպիսով՝ հաշվեհամարի կառուցվածքում երկու նիշերի տեղերը փոխելով սխալը միարժեքորեն բացահայտվում է:

Դեպքը, երբ c=1, d=2 դիտարկվում է նմանատիպ եղանակով:

ՀԱՎԵԼՎԱԾ 2

«Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի վճարահաշվարկային կամ տեղեկատվական համակարգերի մասնակիցների կոդավորման կառուցվածքը, ինչպես նաև հաճախորդների հաշվեհամարների կառուցվածքը սահմանելու մասին» կարգի

Կենտրոնական բանկի վճարահաշվարկային համակարգի մասնակիցների, ինչպես նաև տեղեկատվական համակարգերի մասնակիցներին կոդերի տրամադրման միջակայքերը ամփոփ ձևով

Հ/հ	Իրավական ակտերի անվանումը	Լիցենզավորվող և գրանցվող կազմակերպություններ/անձինք (ըստ իրավական ակտերի)		Կոդերի տրամադրումը՝ համաձայն սույն կոդավորման կարգի դրույթների		
		Կազմակերպության անվանումը/տեսակը		Կոդի միջակայքը	Տրամադրման սկզբունքը	Կառուցվածքային ստորաբաժանում (գլխամաս/մասնաճյուղ)
1	2	3	4	7	9	10
1	«Բանկերի և բանկային գործունեության մասին» ՀՕ–68՝ ընդունված 30.06.1996 թ.	Բանկեր		103 bb - 399 bb, որտեղ 103-ը Կենտրոնական բանկն է:	103-ից սկսած +3 սկզբունքով	xxx00- (գլխամաս) xxx01-99 (մասնաճյուղ)
		Բանկերի միություն		Կարգով սահմանված կոդ չի տրամադրվում	-	
	-	Կենտրոնական բանկին և Համահայկական բանկին նույնականացնող կոդերը ընդգրկվում են բանկերի համար սահմանված թվերի միջակայքում				
2	«Վարկային կազմակերպությունների մասին» ՀՕ–359՝ ընդունված 29.05.2002 թ.	Վարկային կազմակերպություններ	այդ թվում՝	600 bb - 799 bb	600-ից սկսած +1 սկզբունքով	xxx00- (գլխամաս) xxx01-99 (մասնաճյուղ)
			վարկային միությունները			
			խնայողական միությունները			
			ֆինանսական վարձակալություն իրականացնող (լիզինգային) կազմակերպությունները			
			դրամական պահանջի զիջման դիմաց ֆինանսավորում (ֆակտորինգ) իրականացնող ֆակտորինգային կազմակերպությունները			
			սպառողական կրեդիտավորում իրականացնող կազմակերպությունները			
			այլ վարկային կազմակերպությունները			
		Վարկային կազմակերպությունների միություն		Կարգով սահմանված կոդ չի տրամադրվում	-	

1	2	3	4	7	9	10
3	«Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» ՀՕ–150՝ ընդունված 24.11.2004 թ.	Վճարահաշվարկային կազմակերպություններ	այդ թվում՝	800 bb - 859 bb (որտեղ՝ բացառություն են կազմում 801, 805 թվերը)	808-ից սկսած +1 սկզբունքով	xxx00- (գլխամաս) xxx01-99 (մասնաճյուղեր)
			դրամական փոխանցում իրականացնող կազմակերպություն			
			պրոցեսինգ և քլիրինգ իրականացնող կազմակերպություն			
		վճարահաշվարկային կազմակերպությունների միություն		Կարգով սահմանված կոդ չի տրամադրվում	-	
4	«Վարկային տեղեկատվության շրջանառության և վարկային բյուրոների գործունեության մասին» ՀՕ–185՝ ընդունված 28.10.2008 թ.	վարկային բյուրոներ	-	+ Տրամադրվում է այլ հաշվետու կազմակերպության կոդերի միջակայքից		
5	«Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՕ–177՝ ընդունված 09.04.2007 թ.	ապահովագրական կամ ապահովագրական միջնորդային գործունեություն իրականացնող ընկերություններ	այդ թվում՝	53001 bb-53999 bb	53001-ից սկսած + 1 սկզբունքով	xxzzz-00 միչև xxzzz- 99 (լրացուցիչ երկու նիշով կնշվեն մասնաճյուղերը)
			կյանքի ապահովագրություն իրականացնող ընկերություն			
			ոչ կյանքի ապահովագրություն իրականացնող ընկերություն			
			վերաապահովագրություն իրականացնող ընկերություն			
			ապահովագրական բրոքերներ			
			ապահովագրական գործակալներ	Կարգով սահմանված կոդ չի տրամադրվում	-	
5.1		ապահովագրական կամ ապահովագրական միջնորդային ընկերությունների միություն	միություն	Կարգով սահմանված կոդ չի տրամադրվում	-	
6	«Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՕ–63՝ ընդունված 18.05.2010թ. «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՕ–177՝ ընդունված 09.04.2007 թ.	ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրություն իրականացնող Ապահովագրական ընկերությունների բյուրո (այսուհետ՝ Բյուրո)	Բյուրո (կամ Ապահովագրական ընկերությունների բյուրո)	+ Տրամադրվում է Այլ հաշվետու կազմակերպության կոդերի միջակայքից		

1	2	3	4	7	9	10
7	«Ներդրումային ֆոնդերի մասին» ՀՕ- 245՝ ընդունված 22.12.2010 թ.	Ֆոնդեր (Ներդրումային ֆոնդ, այդ թվում՝ Կենսաթոշակային ֆոնդ)	-	51001 fff - 51999 fff	51001-ից սկսած + 1 սկզբունքով	xxzzz-fff մինչև xxzzz- fff (լրացուցիչ fff-երեք նիշով կնշվեն տվյալ ֆոնդի հետ կապված ֆոնդերի կառավարիչները)
8	«Ներդրումային ֆոնդերի մասին» ՀՕ– 245՝ ընդունված 22.12.2010 թ.	Կառավարիչ	այդ թվում՝	450 bb - 499 bb	450-ից սկսած +1 սկզբունքով	xxx00-(գլխամաս) xxx01-99 (մասնաճյուղ)
8.1	«Ներդրումային ֆոնդերի մասին» ՀՕ– 245՝ ընդունված 22.12.2010 թ.		Ներդրումային ֆոնդի կառավարիչ			
8.2	«Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՕ– 244՝ ընդունված 22.12.2010 թ.		Կենսաթոշակային ֆոնդի կառավարիչ			
9.1	«Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՕ–244՝ ընդունված 22.12.2010 թ.	Կենսաթոշակային ֆոնդի պահառուի կարգավիճակ		Կարգով սահմանված կոդ չի տրամադրվում	-	
9.2	«Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՕ–244՝ ընդունված 22.12.2010 թ.	Հաշվի օպերատորի կարգավիճակ		Կարգով սահմանված կոդ չի տրամադրվում	-	
9.3	«Կուտակային կենսաթոշակների մասին» ՀՕ–244՝ ընդունված 22.12.2010 թ.	Մասնակիցների ռեեստր վարող		+ Տրամադրվում է Համակարգի այլ մասնակցի կոդերի միջակայքից		
10	«Արժեթղթերի շուկայի մասին» ՀՕ– 195՝ ընդունված 11.10.2007 թ.	Ներդրումային ընկերություններ		400 bb - 449 bb	400-ից սկսած +1 սկզբունքով	xxx00-(գլխամաս) xxx01-99 (մասնաճյուղ.)
11	«Արժեթղթերի շուկայի մասին» ՀՕ– 195՝ ընդունված 11.10.2007 թ.	Կարգավորվող շուկայի օպերատորներ		+ Տրամադրվում է Համակարգի այլ մասնակցի կոդերի միջակայքից		
12	«Արժեթղթերի շուկայի մասին» ՀՕ– 195՝ ընդունված 11.10.2007 թ.	Կենտրոնական դեպոզիտարիա		+ Տրամադրվում է Համակարգի այլ մասնակցի կոդերի միջակայքից		
13	Համակարգի այլ մասնակցի համար սահմանված կոդեր	Այլ մասնակիցներ՝ ԿԲ վճարահաշվարկային և/կամ տեղեկատվական համակարգերի մասնակիցներ (օր. Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամ, Կենտրոնական դեպոզիտարիա, Կարգավորվող շուկայի օպերատորներ)		860 bb - 899 bb	860-ից սկսած +1 սկզբունքով	xxx00-(գլխամաս) xxx01-99 (մասնաճյուղեր)

1	2	3	4	7	9	10
14	-	ՀՀ գանձապետարան		900 bb - 929 bb	900-ից սկսած + 1 սկզբունքով	xxx 00-(գլխամաս) xxx01-99 (մասնաճյուղեր)
15	«Արժեթղթերի շուկայի մասին» ՀՕ– 195՝ ընդունված 11.10.2007թ.	Հաշվետու թողարկողներ		50001 - 50999	50001-ից սկսած +1 սկզբունքով	
16	«Ակտիվների արժեթղթավորման և ակտիվներով ապահովված արժեթղթերի մասին» ՀՕ–96՝ ընդունված 26.05.2008 թ.	Արժեթղթավորման հիմնադրամ		+ Տրամադրվում է Ֆոնդերի համար սահմանված կոդերի միջակայքից		
17*	«Ակտիվների արժեթղթավորման և ակտիվներով ապահովված արժեթղթերի մասին» ՀՕ–96՝ ընդունված 26.05.2008 թ.	Արժեթղթավորման հիմնադրամի կառավարիչ		+ Տրամադրվում է Կառավարիչների համար սահմանված կոդերի միջակայքից		
18	«Գրավատների և գրավատնային գործունեության մասին» ՀՕ– 43, ընդունված 03.12.2003թ.	Գրավատներ		55001 bb- 55999 bb	55001-ից սկսած +1 սկզբունքով	xxzzz-00 մինչև xxzzz- 99 (լրացուցիչ երկու նիշով կնշվեն մասնաճյուղերը)
19	«Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» ՀՕ–135՝ ընդունված 24.11.2004 թ.	Արտարժույթի առուվաճառք իրականացնող անձինք (փոխանակման կետեր)		54001 bb- 54999 bb	54001-ից սկսած +1 սկզբունքով	xxzzz-00 մինչև xxzzz- 99 (լրացուցիչ երկու նիշով կնշվեն մասնաճյուղերը)
20	«Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» ՀՕ–135՝ ընդունված 24.11.2004 թ.	Արտարժույթի դիլերային-բրոքերային առուվաճառք իրականացնող անձինք		+ Տրամադրվում է Համակարգի այլ մասնակցի կոդերի միջակայքից	-	
21	«Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» ՀՕ–135՝ ընդունված 24.11.2004 թ.	Արտարժույթի առուվաճառքի սակարկություններ կազմակերպող անձինք		+ Տրամադրվում է Այլ հաշվետու կազմակերպությունների համար սահմանված կոդերի միջակայքից	-	
22	<u>Այլ հաշվետու կազմակերպությունների համար սահմանված կոդեր</u>	Այլ հաշվետու կազմակերպություններ՝ Կենտրոնական բանկ հաշվետվություն ներկայացնող կազմակերպություններ, որոնք չեն հանդիսանում Կենտրոնական բանկի վճարահաշվարկային համակարգի մասնակից (օր.՝ Վարկային բյուրոներ, Ավտոտրանսպորտային միջոցների օգտագոր-		52001 yy - 52100 yy	52001-ից սկսած +1 սկզբունքով	xxzzz-00 մինչև xxzzz- 99 (լրացուցիչ երկու նիշով կնշվեն մասնաճյուղերը, եթե գործող օրենսդրության համաձայն կարող է այդպիսին լինել)

* *Պաշտոնական հրատարակության մեջ տեխնիկական պատճառներով խախտվել է սյունակների համարակալումը:*

1	2	3	4	7	9	10
		ծումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրություն իրականացնող ապահովագրական ընկերությունների բյուրո, Արտարժույթի դիլերային-բրոքերային առուվաճառք իրականացնող անձինք)				
	-	56000 մինչև 59999 թվերի միջակայքերը պահուստային են և գտնվում են Կենտրոնական բանկի տնօրինման տակ, և անհրաժեշտության դեպքում կարող են տրամադրվել Կենտրոնական բանկի նախագահի կարգադրության հիման վրա		Միջակայքերը համարվում են պահուստային և կարող են տրամադրվել ըստ անհրաժեշտության		
	-	930-ից մինչև 999 (ներառյալ) միջակայքում ընկած բոլոր թվերը պահուստային են և գտնվում են Կենտրոնական բանկի տնօրինման տակ և անհրաժեշտության դեպքում կարող են տրամադրվել Կենտրոնական բանկի նախագահի կարգադրության հիման վրա:		Միջակայքերը համարվում են պահուստային և կարող են տրամադրվել ըստ անհրաժեշտության		

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի փետրվարի 9-ի թիվ 39-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին[*]

Նպատակ ունենալով հստակեցնել բանկային գործունեությունը կարգավորող տնտեսական նորմատիվների հաշվարկին մասնակցող տարրերի կազմը,

հիմք ընդունելով «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 44-րդ հոդվածի 3-րդ մասը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» և «ժբ» կետերով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ և 70-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի փետրվարի 9-ի ««Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ը հաստատելու մասին» թիվ 39-Ն որոշմամբ հաստատված «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ում (այսուհետ՝ Կանոնակարգ 2) կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները.

1) Կանոնակարգ 2-ի 28.1-րդ կետը լրացնել նոր «թ» ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«թ. գրավի առարկայի տնօրինման արդյունքում բանկի սեփականությանն անցած բաժնետոմսերի հաշվեկշռային արժեքի չափով, այդ բաժնետոմսերը օրենքով սահմանված կարգով բանկի սեփականությունը համարվելու օրվանից վեց ամիս հետո: Ընդ որում, սույն ենթակետում նշված բաժնետոմսերը ենթակա չեն նվազեցման բանկի հիմնական կապիտալից մինչև սույն կետում նշված վեցամսյա ժամկետի ավարտը միայն այն դեպքում, երբ տվյալ բաժնետոմսերի իրական արժեքի վերաբերյալ առկա է անկախ գնահատողի գնահատականը, որը տրվել է սույն ենթակետում նշված բաժնետոմսերը օրենքով սահմանված կարգով բանկի սեփականությունը համարվելու օրվանից առավելագույնը 2 ամիս առաջ, հակառակ դեպքում բաժնետոմսերը նվազեցվում են հիմնական կապիտալի մեծությունից բանկի սեփականությունը համարվելու օրվանից:»:

2) Կանոնակարգ 2-ի 34.7-րդ կետում «պարտատոմսեր» բառից հետո լրացնել «կամ Եվրոպական վերակառուցման և զարգացման բանկի, Եվրոպական կենտրոնական բանկի, Եվրոպական ներդրումային բանկի, այլ միջազգային կազմակերպությունների (որոնց անդամակցում է Հայաստանի Հանրապետությունը) կողմից թողարկված ոչ պետական պարտատոմսեր՝» բառերով:

3) Կանոնակարգ 2-ի 34.10-րդ կետի 1-ին ենթակետը «Այն ակտիվների» բառերից հետո լրացնել «(բացառությամբ՝ ռեպո համաձայնագրերի)» բառերով:

4) Կանոնակարգ 2-ի 38.2-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«38.2. Եթե փոխառուն (անձը) և այլ իրավաբանական անձը փոխկապակցված են միայն այն հիմքով, որ պետությունը, Միջազգային ֆինանսական կորպորացիան, Եվրոպական վերակառուցման և զարգացման բանկը և (կամ) Ասիական զարգացման բանկը տիրապետում է (են) փոխառուի (անձի) և այդ իրավաբանական անձի ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայամասնակցությունների) 20 տոկոսից ավելիին կամ իրավունք ունի (ունեն) օրենքով չարգելված այլ ձևով կանխորոշել նրանց որոշումները, ապա $Ն3^1$ և $Ն3^2$ նորմատիվների հաշվարկման իմաստով այդ փոխառուն (անձը) և այլ իրավաբանական անձը չեն համարվում փոխկապակցված:»:

5) Կանոնակարգ 2-ը լրացնել նոր 44.1-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«44.1. Եթե բանկը և անձը կապված են միայն այն հիմքով, որ պետությունը, Միջազգային ֆինանսական կորպորացիան, Եվրոպական վերակառուցման և զարգացման բանկը և (կամ) Ասիական զարգացման բանկը հանդիսանում է (են) բանկի նշանակալից մասնակից և միևնույն ժամանակ տիրապետում է (են) այդ անձի ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայամասնակցությունների) 20 տոկոսից ավելիին կամ իրավունք ունի (ունեն) օրենքով չարգելված այլ ձևով կանխորոշել

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2013 թ. հուլիսի 23-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 6.08.2013 թ. (ՀՀԳՏ N25 (469)[1], 15.08.2013):

այդ անձի որոշումները, ապա Ն4[1] և Ն4[2] նորմատիվների հաշվարկման իմաստով բանկը և այդ անձը չեն համարվում կապված:»:

6) Կանոնակարգ 2-ի 56.1-րդ կետը 1-ին պարբերությունից հետո լրացնել նոր նախադասությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«Արտարժութային դիրքի հաշվարկում արտարժութային ակտիվներն ընդգրկվում են առանց հաշվի առնելու այդ ակտիվների գծով ձևավորված հնարավոր կորուստների պահուստի մեծությունը, բացառությամբ ոչ ստանդարտ և կասկածելի դասակարգված արտարժութային ակտիվների, որոնք հաշվարկին մասնակցում են՝ հաշվի առնելով հնարավոր կորուստների պահուստի մեծությունը (հաշվեկշռային արժեքով): Սույն մասին համապատասխան՝ բացառապես բանկի դատողությունների և մասնագիտական կարծիքի հիման վրա սուբյեկտիվ չափանիշով դասակարգված (այդ թվում՝ անհուսալի) արտարժութային ակտիվները արտարժութային դիրքի հաշվարկում ընդգրկվում են այն չափով, որքանով կընդգրկվեին օբյեկտիվ չափանիշով դասակարգված լինելու դեպքում: Արտարժութային դիրքի հաշվարկում արտարժութային ակտիվներն ընդգրկվում են առանց հաշվի առնելու այդ ակտիվների գծով Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 1999 թվականի ապրիլի 23-ի թիվ 63 որոշմամբ հավանության արժանացած «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի վարկերի ու դեբիտորական պարտքերի դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման կարգին հավանություն տալու մասին» կարգի 4.4-րդ կետի համաձայն՝ բանկի կողմից հնարավոր կորուստների պահուստին կատարված ավելացված հատկացումները, ինչպես նաև առանց հաշվի առնելու առանց ակտիվների դասակարգման լրացուցիչ պահուստին կատարվող հատկացումները:»:

7) Կանոնակարգ 2-ի 56.2-րդ կետը լրացնել 5-րդ ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«5) Փակ դիրքով (բեք թու բեք) ածանցյալ գործիքները, մասնավորապես՝ արտարժույթի առքի ու վաճառքի միաժամանակ կնքված հակադարձ գործարքները, որոնք բավարարում են հետևյալ պայմանները միաժամանակ.

ա. գործարքները կնքվել են նույն ժամկետներով, նույն ծավալներով և միևնույն արժութային զույգերով, ընդ որում՝ գործարքների արժույթներից մեկը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության դրամը,

բ. գործարքներից առնվազն մեկը կնքվել է Ստանդարտ և Փուրզ կամ Ֆիթչ (փակագծում՝ Մուդիզ) վարկանշային գործակալությունների կողմից տրամադրված երկարաժամկետ ավանդների ներգրավման Ա+(Ա1) և Ա+(Ա1)-ից բարձր վարկանիշ ունեցող օտարերկրյա կառավարությունների, կենտրոնական (ազգային) բանկերի կամ ֆինանսական կազմակերպությունների հետ,

գ. օպցիոն գործարքի կնքման դեպքում՝ առնվազն օպցիոններից մեկի իրականացման իրավունքը պատկանում է բանկին (բանկը հանդիսանում է օպցիոնի գնորդ):»:

8) Կանոնակարգ 2-ի 56.3-րդ կետում «2-րդ և 3-րդ» բառերը փոխարինել «2-րդ, 3-րդ և 5-րդ» բառերով:

9) Կանոնակարգ 2-ի 56.4-րդ կետում «ընդ որում, 2010 թվականի օգոստոսի 1-ից առանց ածանցյալ գործիքների արտարժութային դիրքի հաշվարկում ներառվում են սույն կանոնակարգի 56.2-րդ կետի 1-4 ենթակետերով սահմանված ածանցյալ գործիքները» բառերը փոխարինել «ընդ որում, առանց ածանցյալ գործիքների արտարժութային դիրքի հաշվարկում ներառվում են սույն կանոնակարգի 56.2-րդ կետի 1-5 ենթակետերով սահմանված ածանցյալ գործիքները» բառերով:

10) Կանոնակարգ 2-ի Հավելված 3-ի աղյուսակ 1-ի 6.7-րդ կետն ուժը կորցրած ճանաչել:

11) Կանոնակարգ 2-ի Հավելված 3-ի աղյուսակ 1-ի 6.27-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

6.27. Պահանջներ հարկային օրենսդրությամբ սահմանված հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների գծով վճարման ենթակա գումարներից, հարկային օրենսդրությամբ սահմանված կանխավճարներից ավելի վճարված գումարների գծով	100	–

12) Կանոնակարգ 2-ի Հավելված 3-ի 22.1-րդ կետի վերջին պարբերության մեջ «(համաձայն սույն հավելվածի 6-րդ կետի աղյուսակի՝ հաշվի առնելով ռեպո համաձայնագրով վաճառված արժեթղթի արժույթը)» բառերը փոխարինել «(համաձայն սույն հավելվածի 6-րդ կետի աղյուսակի՝ հաշվի առնելով ռեպո համաձայնագրով տրամադրված դրամական միջոցների արժույթը)» բառերով:

13) Կանոնակարգ 2-ի Հավելված 3-ի 23.1-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«23.1. Ֆինանսական գրավով ապահովված ՎՈՋՄ-ին ենթակա պահանջը վարկային ռիսկի հաշվարկում ընդգրկվում է 0% ռիսկի կշռով, եթե՝

1) որպես ֆինանսական գրավ հանդես է գալիս տվյալ բանկում պահվող (ներառյալ՝ տվյալ բանկի դեպոզիտային հաշիվներում հաշվառվող)՝ բանկային ոսկին, Հայաստանի Հանրապետության դրամը, առաջին խմբի մեջ մտնող արտարժութային միջոցները կամ ռուբլին, կամ

2) բավարարված են հետևյալ պայմանները միաժամանակ՝

ա. ապահովվածությունը Հայաստանի Հանրապետության դրամով Կենտրոնական բանկի կողմից թողարկված արժեթուղթ է, Հայաստանի Հանրապետության պետական գանձապետական պարտատոմս կամ այլ երկրների կենտրոնական բանկերի կամ կառավարությունների կողմից թողարկված արժեթուղթ, որը, համաձայն սույն հավելվածի 6-րդ կետի, վարկային ռիսկի հաշվարկում ընդգրկվում է 0% ռիսկի կշռով,

բ. գրավը վերագնահատվում է ամեն օր,

գ. փոխառուն (պարտապանը) դասվում է սույն հավելվածի 27-րդ կետով սահմանվող շուկայի հիմնական մասնակիցների շարքին:»:

14) Կանոնակարգ 2-ի Հավելված 3-ի 26-րդ կետը լրացնել 26.1.1-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«26.1.1. Տվյալ բանկում պահվող (ներառյալ՝ տվյալ բանկի դեպոզիտային հաշիվներում հաշվառվող)՝ բանկային ոսկի, Հայաստանի Հանրապետության դրամ, առաջին խմբի մեջ մտնող արտարժութային միջոցներ, ռուբլի, ինչպես նաև այլ արտարժութային միջոցներ (եթե վերջիններս հանդիսանում են միևնույն արտարժույթով արտահայտված ակտիվների ապահովում):»:

15) Կանոնակարգ 2-ի Հավելված 4-ի 6.3-րդ կետը առաջին նախադասությունից հետո լրացնել նոր նախադասությամբ՝ հետևյալ բովանդակությամբ.

«Արտարժութային դիրքի հաշվարկում արտարժութային ակտիվներն ընդգրկվում են առանց հաշվի առնելու այդ ակտիվների գծով ձևավորված հնարավոր կորուստների պահուստի մեծությունը, բացառությամբ ոչ ստանդարտ և կասկածելի դասակարգված արտարժութային ակտիվների, որոնք հաշվարկին մասնակցում են՝ հաշվի առնելով հնարավոր կորուստների պահուստի մեծությունը (հաշվեկշռային արժեքով): Սույն մասին համապատասխան՝ բացառապես բանկի դատողությունների և մասնագիտական կարծիքի հիման վրա սուբյեկտիվ չափանիշով դասակարգված արտարժութային ակտիվները արտարժութային դիրքի հաշվարկում ընդգրկվում են այն չափով, որքանով կընդգրկվեին օբյեկտիվ չափանիշով դասակարգված լինելու դեպքում: Արտարժութային դիրքի հաշվարկում արտարժութային ակտիվներն ընդգրկվում են առանց հաշվի առնելու այդ ակտիվների գծով Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 1999 թվականի ապրիլի 23-ի թիվ 63 որոշմամբ հավանության արժանացած «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի վարկերի ու դեբիտորական պարտքերի դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման կարգին հավանություն տալու մասին» կարգի 4.4-րդ կետի համաձայն՝ բանկի կողմից հնարավոր կորուստների պահուստին կատարված ավելացված հատկացումները, ինչպես նաև առանց հաշվի առնելու առանց ակտիվների դասակարգման լրացուցիչ պահուստին կատարվող հատկացումները:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 10-րդ օրը, բացառությամբ սույն որոշման 1-ին կետի 3-րդ, 10-րդ, 13-րդ և 14-րդ ենթակետերի, որոնք ուժի մեջ են մտնում սույն որոշման ընդունման օրվան հաջորդող վեցերորդ ամսվան հաջորդող ամսվա 1-ին:

3. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետի 6-րդ և 15-րդ ենթակետերի համաձայն արտարժութային դիրքի հաշվարկում ընդգրկվող ոչ ստանդարտ և կասկածելի դասակարգված արտարժութային ակտիվների արժեքից հնարավոր կորուստների պահուստի մեծությունը 2013 թվականի օգոստոսի 26-ից մինչև 2014 թվականի մայիսի 18-ը նվազեցվում է 30%-ով, 2014 թվականի մայիսի 19-ից մինչև օգոստոսի 24-ը՝ 60%-ով, իսկ 2014 թվականի օգոստոսի 25-ից՝ ամբողջությամբ:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
25 հուլիսի 2013 թ., N 179-Ն

ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

(ՕԳՈՍՏՈՍ 2013)

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի «ՀՀ ԿԲ տեղեկագիր» ամենամսյա պարբերականի «Դրամավարկային ամփոփագիր» բաժինը ներառում է դրամավարկային, արտաքին, հարկաբյուջետային և իրական հատվածների, ՀՀ վճարահաշվարկային և ֆինանսական համակարգերի ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն:

Իրական հատվածի (բացառությամբ բնականոն գնաճի) և արտաքին հատվածում ընդգրկված ապրանքների արտահանման ու ներմուծման վերաբերյալ տեղեկատվության աղբյուրը ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունն է (http://www.armstat.am), իսկ հարկաբյուջետային, արտաքին հատվածի, դրամավարկային և ֆինանսական վիճակագրության, բնականոն գնաճի և ՀՀ վճարահաշվարկային համակարգի վերաբերյալ տեղեկատվության աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկը: Դրամավարկային և ֆինանսական վիճակագրությունում ընդգրկված է դրամավարկային ցուցանիշների, ֆինանսական շուկայի և ֆինանսական համակարգի հիմնական ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն:

Վճարային հաշվեկշիռը, միջազգային ներդրումային դիրքը և արտաքին պարտքը կազմվում և հրապարակվում են եռամսյակային կտրվածքով՝ փետրվար, մայիս, օգոստոս և նոյեմբեր ամիսների տեղեկագրերում:

Դրամավարկային ցուցանիշները կազմված են համաձայն ՀՀ ԿԲ «ՀՀ դրամավարկային և ֆինանսական վիճակագրության ձեռնարկի», որը տեղադրված է ՀՀ ԿԲ «Տնային էջի» «Վիճակագրություն» բաժնում:

Դրամավարկային ցուցանիշների, միջազգային պահուստների և արտաքին պարտավորությունների վերաբերյալ տեղեկատվությունը ենթակա է վերանայման եռամսյակային և տարեկան կտրվածքով՝ նշված ցուցանիշներում ԿԲ եզրափակիչ շրջանառության գործառնություններն ընդգրկելու նպատակով: Եռամսյակային տվյալները վերանայվում են (համարվում են վերջնական) հաշվետու եռամսյակի ավարտից երկու ամիս հետո, իսկ տարեկան տվյալները՝ հաշվետու տարվա ավարտից երեք ամիս հետո:

Վիճակագրական տվյալների հրապարակման ժամանակացույցը տեղադրված է ՀՀ ԿԲ «Տնային էջի» «Վիճակագրություն» բաժնում:

Հարցերի և առաջարկությունների համար դիմել
Վիճակագրության վարչություն
Հեռախոս՝ (374 10) 592-562
Ֆաքս՝ (374 10) 592-564
էլ. փոստ՝ sd.mpd@cba.am

«Դրամավարկային ամփոփագիրը», ինչպես նաև ՀՀ ԿԲ այլ հրապարակումները տեղադրվում են ՀՀ կենտրոնական բանկի «Տնային էջում», որի հասցեն է՝
http://www.cba.am

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Իրական հատվածի ցուցանիշներ 55
Մակրոտնտեսական ցուցանիշներ
Գների ինդեքսներ
Գնաճ
Գնաճին առավելապես նպաստած ապրանքախմբերը
Բնականոն գնաճ
Բնականոն գնաճին առավելապես նպաստած ապրանքատեսակները
Արտաքին հատվածի ցուցանիշներ 58
Ապրանքների արտահանում և ներմուծում
Ըստ երկրների ՀՀ բանկային համակարգի միջոցով ֆիզիկական անձանց փոխանցումները
Ըստ երկրների ՀՀ բանկային համակարգի միջոցով ֆիզիկական անձանց ոչ առևտրային նպատակով կատարված փոխանցումները
Դրամական փոխանցումների ներհոսքն ըստ վճարային հաշվեկշռի
Իրական և անվանական արդյունավետ փոխարժեք
ՀՀ վճարային հաշվեկշիռ (ստանդարտ ներկայացում ըստ «Վճարային հաշվեկշռի կազմման ձեռնարկի» 5-րդ հրատարակության մեթոդաբանության)
ՀՀ վճարային հաշվեկշիռ (վերլուծական ներկայացում)
ՀՀ միջազգային ներդրումային դիրք (ըստ «Վճարային հաշվեկշռի կազմման ձեռնարկի» 5-րդ հրատարակության մեթոդաբանության)
ՀՀ առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների միջազգային ներդրումային դիրք
ՀՀ առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների արտաքին ակտիվների և պարտավորությունների արժութային կազմը
ՀՀ համախառն արտաքին պարտք (ըստ «Վճարային հաշվեկշռի կազմման ձեռնարկի» 5-րդ հրատարակության մեթոդաբանության)
ՀՀ վճարային հաշվեկշիռ (ստանդարտ ներկայացում ըստ «Վճարային հաշվեկշռի կազմման ձեռնարկի» 6-րդ հրատարակության մեթոդաբանության)
ՀՀ միջազգային ներդրումային դիրք (ըստ «Վճարային հաշվեկշռի կազմման ձեռնարկի» 6-րդ հրատարակության մեթոդաբանության)
ՀՀ համախառն արտաքին պարտք (ըստ «Վճարային հաշվեկշռի կազմման ձեռնարկի» 6-րդ հրատարակության մեթոդաբանության)
Հայաստանի Հանրապետության միջազգային պահուստների կառուցվածքը
ՀՀ կենտրոնական բանկի արտաքին պարտավորությունների կառուցվածքը
Պետական բյուջեի ցուցանիշներ 83
Կենտրոնական բանկի և Գանձապետարանի փոխհարաբերությունները
Դրամավարկային ցուցանիշներ 84
Փողի ագրեգատներ և փողի բազմարկիչներ
Սեզոնայնորեն հարթեցված փողի ագրեգատներ
ՀՀ կենտրոնական բանկի ամփոփ ցուցանիշներ
ՀՀ առևտրային բանկերի ամփոփ ցուցանիշներ
ՀՀ վարկային կազմակերպությունների ամփոփ ցուցանիշներ
ՀՀ ավանդային կազմակերպությունների ամփոփ ցուցանիշներ
ՀՀ ավանդային կազմակերպությունների զուտ արտաքին ակտիվներ
Դոլարայնացման մակարդակը Հայաստանի Հանրապետությունում
Ֆինանսական շուկա 94
Տոկոսադրույքներ
Բանկային տոկոսի հաշվարկային դրույքը
Ֆինանսական շուկայում ՀՀ ԿԲ գործառնությունների տոկոսադրույքները
Ֆինանսական շուկայում ՀՀ ԿԲ գործառնությունների ծավալը
ՀՀ ԿԲ կողմից կնքված արժութային սվոպ գործառնությունների ծավալները և միջին տոկոսադրույքները
Ռեպո շուկայի շրջանառությունը
Առևտրային բանկերի կողմից տնտեսությունից ներգրավված ավանդների և տրամադրված վարկերի ծավալները և տոկոսադրույքները
Բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից ՀՀ դրամով և արտարժույթով տրամադրված վարկերի տոկոսադրույքներն ըստ մարզերի
Պետական կարճաժամկետ պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը

Պետական միջին ժամկետայնության արժեկտրոնային պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը
Պետական երկարաժամկետ արժեկտրոնային պարտատոմսերի առաջնային տեղաբաշխման ծավալները և եկամտաբերությունը
ՊՊ երկրորդային շուկայում իրականացված գործառնությունները
Պետական (գանձապետական) պարտատոմսերում ներդրողների կառուցվածքը
ՀՀ ԿԲ կողմից արժութային շուկայում իրականացված գործառնությունները
Առևտրային բանկերի կողմից արժութային շուկայում իրականացված գործառնությունները
ՀՀ ֆոնդային բորսայում արտարժութային գործառնությունների ծավալները
Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/ԱՄՆ դոլար միջին փոխարժեքը
Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/եվրո միջին փոխարժեքը
Արժութային շուկայում ձևավորված ՀՀ դրամ/ՌԴ ռուբլի միջին փոխարժեքը
Վարկային ներդրումներ 114
Առևտրային բանկերի վարկերն ըստ տնտեսության հատվածների
Առևտրային բանկերի վարկային ներդրումներն ըստ ժամկետայնության
Առևտրային բանկերի վարկային գործառնությունների գործիքակազմը
Առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին տրված վարկերի ճյուղային կառուցվածքը
Առևտրային բանկերի չաշխատող ակտիվների տեսակարար կշիռն ըստ ոլորտների
ՀՀ առևտրային բանկերի ընդհանուր միջբանկային ավանդները և վարկերը
Վարկային կազմակերպությունների վարկերն ըստ տնտեսության հատվածների
Վարկային կազմակերպությունների վարկային ներդրումներն ըստ ժամկետայնության
Վարկային կազմակերպությունների վարկային գործառնությունների գործիքակազմը
Վարկային կազմակերպությունների կողմից ռեզիդենտներին տրված վարկերի ճյուղային կառուցվածքը
Առևտրային բանկերի ավանդներ 125
Առևտրային բանկերի ավանդներն ըստ տնտեսության հատվածների
Ֆինանսական կազմակերպությունների հիմնական ցուցանիշներ 127
Ֆինանսական կազմակերպությունների քանակը և կառուցվածքը
ՀՀ առևտրային բանկերի հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը
Բանկային համակարգի գործունեության հիմնական տնտեսական նորմատիվների մեծությունը
ՀՀ վարկային կազմակերպությունների հիմնական ցուցանիշները և դրանց փոփոխությունը
Վարկային կազմակերպությունների ընդհանուր կապիտալի համարժեքության նորմատիվի մեծությունը
Ներդրումային ծառայություններ մատուցող ընկերությունների հիմնական ցուցանիշներ
Ներդրումային ծառայություններ մատուցող անձանց կողմից կնքված գործարքներ
Հավատարմագրային կառավարման վերցված միջոցներ
Պահառության վերցված արժեթղթեր
Գրավատների ցուցանիշներ
Արտարժույթի փոխանակման կետերի կողմից իրականացված գործառնություններ
Վճարահաշվարկային համակարգ 133
Կենտրոնական բանկի վճարահաշվարկային համակարգերով կատարված դրամական փոխանցումներ
ՀՀ տարածքում անկանխիկ վճարային գործիքներով բանկային համակարգում իրականացված փոխանցումներ
ՀՀ առևտրային բանկերի և օտարերկրյա բանկերի կողմից թողարկված վճարային քարտերով իրականացված գործառնությունները ՀՀ տարածքում ըստ սպասարկման միջոցների
ՀՀ բանկերի կողմից թողարկված քարտերով իրականացված գործառնություններն արտասահմանում

ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Ամվանում	*2013թ. հուլիս*	*2013թ. հուլիսի իրական աճի ինդեքսը 2012թ. հուլիսի նկատմամբ (%)*	*2013թ. օգոստոս*	*2013թ. օգոստոսի իրական աճի ինդեքսը 2012թ. օգոստոսի նկատմամբ (%)*
Տնտեսական ակտիվության ցուցանիշ	-	102.1	-	103.2
Արդյունաբերական արտադրանքի ծավալը *(մլն ՀՀ դրամ)*	95634.3	98.5	101106.9	102.9
